



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

491.99-5

12-91

2833

495

0-20

1884

3368

~~Handwritten signature~~

Handwritten text: *Handwritten* *Handwritten* *Handwritten*

*Handwritten signature*

*Handwritten signature*

*Handwritten signature*

1890. *Handwritten* . 1

1004  
16400

491.542-5 | 20440302 . 2  
2-91 | 460448000000  
900000 66000 20300


010

491. 99-5

32

2-91

452

425

80-20


ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՊՐԱԲԱՐ ԱԶՁԱԻԻ

ՀԱՅՈՑ

Ի ՊԵՏԱ ՆՈՐԱՎԱՐԺԻՅ

15536-58  
(1004 / 16400)



Հ. ՂՈՒԿԱՍԵԱՆՑ



32955-4.4.

ԹԻՖԼԻՍ

ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐԱՎԱՐԺԻՅԻ ՏՊԱՐԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԿՆԵՐ, 5

1884

ՆԱԽԱՆՆՈՒԹՈՒԹԻՒՆ

Ոչ թէ հեղինակի անուն վաստակելու սնապարծ ցանկութիւնից դրդուած վստահացայ ձեռնարկել այս երկասիրութիւնը, մանաւանդ թէ յանդգնութիւն իսկ կըհամարիմ ձգտել դասուելու Հայ քերականների ակմբի մէջ այս դուգնաքեայ աշխատութեամբս, այլ փափագելով միայն իւ և իցէ նպաստել դերացնելու մեր միջնակարգ դպրոցների մէջ Հայոց գրաբար լեզուի ուսման գործը դասատուների և առաւել ևս աշակերտների համար, որոնք ինչպէս գիտեմ փորձով, հանդիպում են բազմապիսի դժուարութեանց ու խոչընդոտների պատշաճաւոր ձեռնարկի պակասութիւնից: Յոյս ունիմ որ այս գրքոյին իւր ծաւալով ու բացատրութեանց եղանակով շատ թէ քիչ պիտի կարողանայ ծառայել իւր նշանակութեանը. և մտադրութեամբ կը թողում ապագային, որ թէ փորձը թէ անաչառ ու անխճրիծ քննադատութիւնն ուղղեն սորա թերութիւնները:

Հարկ եմ համարում յաւելուլ, որ ձեռնարկիս մէջ աննպատակ համարեցի դնել գործնական վարժութեանց զանազան օրինակներ, ոչ թէ ժխտելով այնպիսի վարժութեանց օգուտն իսպառ, այլ ճանաչելով այդ առաւել ուսուցչի գործ, որ ինքն ըստ յարմարագատութեան պէտք է կազմէ ու տնօրինէ, աչքի առաջ ունելով աշակերտից պատրաստութիւնն և այլ պատահական հանգամանքներ:

Այլ և՛ քերականական այն ամեն գիտելիքներն, որ ենթադրումեմ թէ աշակերտը պէտք է անհրաժեշտապէս սովորած լինի արդէն աշխարհաբարի քերականութեան մէջ, բարւոք դատեցի անցնել համառօտութեամբ միայն, այնչափ որ այստեղ էլ մի անգամ վերանորոգուին նոքա աշակերտի լիջողութեան մէջ և աշխատութեանս մէջ պահուած լինի քերականական ուսման համակարգեալ ընթացքը:

25 Յունիսի 1884 թ.

Աղէքսանդրապօլ.

Հ. Ղ.

Дозволено цензурою. Тифлисъ, 13 Юля 1884 г.

Типографія И. Мартиросіанца, Орбеліан. ул, д. № 5.



դասուին բառերը: Եւ չորրորդ, թէ ինչպէս բառերը խօսքի մէջ պէտք է ուղիղ կարգացուին և ուղիղ գրուին:

3. Այն մասն, որ ուսուցանում է բառերի կազմութեան հանգամանքները, կոչուում է ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ:

Այն մասն, որ ուսուցանում է բառերի միմեանց մէջ կապակցութեան օրէնքները, կոչուում է ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ:

Այն, որ ուսուցանում է խօսքի մէջ բառերի պարզ և վախճուած շարադասութեան կարգը, կոչուում է ՇԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ:

Իսկ այն, որ ուսուցանում է բառերն ուղիղ գրելու և զբրածն ուղիղ կարգալու կանոնները, կոչուում է ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ:

**Բ.**

**ԲԱՌ ԵՒ ԻՒՐ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ**

4. Բառը մի յոր—ածոյ ձայն է, որ յայտնում է որ և իցէ իմաստ: Յօդուածոյ ձայն է բառը նորան համար, որ բաղկանում է առանձին առանձին՝ իրար հետ յօդաւորուած միացած ձայներից:

Առանձին որ— ձայների գրաւոր նշանները կոչուում են Գէր կամ Տ—: Հայոց լեզուն ունի երեսուն և ութ գիր, որոնցից ութը (ա, ե, է, ը, ի, օ, լ, օ) Զայն—որ են, մնացածները Բայն—որ:

5. Բառերն ըստ իւրեանց կազմութեան երեք տեսակ են, Պարզ, Բարդ և Ածանցեալ:

Պարզ են կոչուում այն բառերն, որ արտայայտում են միայն մի պարզ իմաստ. օրինակ՝ տուն, սէր, հայր, քաղցր, սուրբ:

Բարդ այն բառերն են, որ բաղկացած են երկու, երեք և աւելի, նշանական բառերից, ուրեմն մի բաղադրեալ իմաստ ունին. օրինակ՝ տնտես, սիրայորդոր, հայրագործ, քաղցրկարկաչ, սրբասուն, հոգեկեցոյց, գունդագունդ, պատիպատ, ոսկեհուռ, տանտէր, մեծիմաստ:

Ածանցեալ են այն բառերն, որոնք սկզբից կամ վերջից յաւելացած ունին որ և է մասնիկ. օրինակ՝ բժգոհ, անիտ, ագէտ, փառ—ա—որ, հոգ—ե—լան, ջր—այ—իւ, աւագոր, տնակ, գառնիկ, ծառակ, իրաւայի, յաճախակի: \*)

Մասնիկների թիւը շատ շատ է. նոքա թէ և ըստ ինքեան նշանակութիւն չունին և առանձին չեն գործածուում, բայց յաւելանալով բառերի վերայ, նոցա նշանակութիւնը մի որ և է կերպով փոխում են: (Յաւելուած. 290—304):

\*) Բարդութեանց եւ ածանցմանց մէջ պէտք է դիտել, որ

Ա. Բարդուող բառերն իրար հետ, կամ ածանցուող բառը վերջից յաւելացող մասնիկ հետ միանում է հետեւեալ գրերից մէկն ու մէկով—, է, է, է եւ — (ւ), որոնցից յաճախագոյն գործածուողներն են — եւ է: Երբեմն էլ նոքա միանում են առանց այդ յօդակապ գրերի:

Բ. Բարդուող եւ ածանցուող բառերի մէջ յոգնականացուցիչ + գիրը զեղչուում է սովորաբար:

**Գ.**

**ՄԱՍՈՒՆՔ—ԲԱՆԻ**

6. Որովհետեւ խօսքը կամ բանը բաղկանում է բառերից, ուստի և ամեն մի բառ քերականութեան մէջ կոչուում է Մասն—բանի: Մասունք—բանի չեն կարող միանման նշանակութիւն ունենալ, այլ տարբեր տարբեր: Նշանակութեամբ միանման բառերը քերականութեան մէջ հաւաքուած են խումբ խումբ, որոնց թիւը հասնում է ութի:

Ուրեմն մասունք—բանի ութ են. ԱՆՈՒՆ, ԴԵՐԱՆՈՒՆ, ԲԱՅ, ԴԵՐԲԱՅ, ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ, ՄԱԿԲԱՅ, ՇԱՂԱՊ և ԶԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ:

7. Սոցանից առաջին չորսը փոփոխական են, այսինքն

խօսքի մէջ գործածուելիս՝ նոցա օկզբնական ձևը կարող է փոփոխուել այլ և այլ ջանգերով. իսկ վերջին չորսն անփոփոխ են, այսինքն իրանց օկզբնական ձևը չեն փոխիլ գործածուելու ժամանակ:

Անուանց և դերանուանց փոփոխումն կոչուումէ Հոլովումն, իսկ բայերինը՝ Խոնարհումն: Գերբայները խօսքի մէջ իրանց ստացած նշանակութեան համեմատ մերթ կը խոնարհուին, մերթ կը հոլովուին:

**Գ Լ ՈՒ Խ Ա.**

**ԱՆՈՒՆ**

**8.** Խօսքի մէջ գործածուող բառերից առաջին տեսակն է Անունը:

Անունն է մասն բանի, որ նշանակումէ որ և է առարկայի, անձի կամ իրի անուն, և կամ ցոյց է տալիս մի առարկայի ինչպիսի կամ որը լինիլը, քանի կամ քանիերորդ լինիլը:

Այն, որ ցոյց է տալիս առարկայի ինչ լինիլն, այսինքն արտայայտումէ առարկայի ուղիղ անունը, կոչուումէ Գոյական. իսկ այն, որ առարկայի որպիսի կամ որը լինիլն է ցոյց տալիս, կոչուումէ Ածական: Եթէ ածականը ցոյց է տալիս մի առարկայի քանիս կամ քանիերորդ լինիլն՝ ասուումէ Թուական անուն:

**9.** Ուրեմն անուանք իրօք երեք են. Գոյական, Ածական և Թուական:

... Երբ ցոյց տալիս ինչ լինիլն, այսինքն արտայայտումէ առարկայի ուղիղ անունը, կոչուումէ Գոյական.

**ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ**

**10.** Գոյական անունն է առարկայի անունը:

Առարկաները լինումեն Նիւթաւոր և Աննիւթ, այսինքն մարմին ունեցող և անմարմին: Հոշ, մարդ, գրէչ նիւթաւոր են: Հոգի, սէր, նախնայ, բորժ, իմաստութիւն՝ աննիւթ են:

Նիւթաւոր առարկաներն էլ երկու տեսակ են. Չնչաւոր և Անշունչ:—Մարդ, սրժի-, դարձար, արիւն՝ շնչաւոր են.— Գայտ, էրկու, սեղան, սաշտ՝ անշունչ են:

**11.** Գոյական անուանք երեք տեսակ են: Յատուկ, Հասարակ և Հաւաքական:

Յատուկ կոչուումեն այն գոյականներն, որ աշխարհիս մէջ գտնուած մի հատ առարկայի անուն են նշանակում. ինչպէս՝ Արտաշատ, Եփրատ, Գրիգոր, Զիրաւ, Արագած, և այլն:

Հասարակ են այն առարկանների անուններն, որոնք բազմաթիւ են աշխարհիս վերայ. ինչպէս՝ քաղաք, գետ, դաշտ, լեռան և այլն:

Հաւաքական է կոչուում այն գոյականն, որ եզակի ձայնով նշանակումէ միանման առարկանների բազմութիւն. այսպիսիք են՝ զուեդ, խումբ, երամ, հոյլ, բոյլ, տարմ, անտառ, ժողովուրդ, վոհմակ, և այլն:

**12.** Թիւ:—Բառը թէ որ մի առարկայի անուն է արտայայտում՝ նորա գործածութիւնը մեքայ է. իսկ եթէ մէկէ մէկ առարկանների՝ Բաշմեքայ: Առաջին տեսակ բառերն Եզակի են, երկրորդ տեսակներն՝ Յոգնակի: Եզակին և յոգնակին ցոյց են տալիս անուանց Թիւը:

Անուանց վերջաւորութիւններն եզակի թուում ուրիշ կերպ են փոփոխուում, յոգնակի թուում ուրիշ կերպ: Օրինակի համար՝ Եւ. գործ, գործոյ, գործով. Յոգ. գործք, գործոց, գործովք:

**13.** ՀՈՒՈՎ:—Անուան վերջաւորութեան փոփոխումն կոչ-

ուումէ Հոլով: Հոլովները վեց հատ են. Աւղղական, Սե-  
ռական, Տրական, Հայցական, Գործիական և  
Քացառական:

Սոցանից ոմանք վերջահոլ են.—գործ—ոյ, գործ—ով. այլ  
ոմանք նախորդի.—գործ, և ոմանք ևս նախորդի.—վերջահոլ—  
ի գործ—ոյ:

14. ՀՈՒՈՎՈՒՄՆ:—Քոյոր անուանք միանման չեն Հո-  
լովում, այլ տարբեր տարբեր. նոքա գլխաւորապէս Հոլովումեն  
եօթն տեսակ. ուստի նախորդ անուանց Հոլովումներն  
եօթն են:

Հոլովումներն իրարից որոշումեն գլխաւորապէս Սեռական  
Հոլովով, որի մէջ երևումեն որոշիչ հոլովաւոր գրեբը. սոքա այբ-  
ուբենի կարգով հետևեալներն են. ա, ե, ի, ո, ու, որոնք  
կամ պարզապէս յաւելանումեն Աւղղական Հոլովի վերջը, կամ  
թէ մտնումեն վերջին վանկի մէջ. օրինակ՝ Հայկ—ոյ, սրբ—ոյ \*)  
պահ—ոյ, բան—ի, ուսմ—ոսմ—ն, անձ—ի—ն, կայս—ե—ր:

\*) Հայկոյ, սրբոյ բառերի վերջը թէ և յ զիր կայ, բայց  
սա անծայն զիր է և Սեռականի վերջն ու, ո ծայնաւորներն են՝  
պարզապէս յաւելացած ուղղականի վերայ:—Աւղղագրական կա-  
նոնով ու, ո վերջաւորուած բառերի վերջը յիշեալ տառերից յետոյ  
պէտք է յաւելացնել անծայն յ: Քացառութիւն կազմումեն նոյն  
վերջաւորութեամբ չհոլոված յատուկ անունները, հրամայական ե-  
ղանակի բառեր, չհոլոված դերանուններ և անփոփոխ մասունք  
բանի: (Ներուպա, Աննա, գնն, դողն, կեցն, սա, բո, արն). (256 §):

15. Արմատական Հոլովներն երկու են. Աւղղական և Սե-  
ռական. սոցանից կազմումեն միւս Հոլովները:

Աւղղականից կազմումէ Հայցականը՝ յոգնակի թւում \* յան-  
գը փոխելով \* և ընդունելով չ նախդիրը, երբ որոշեալ է:  
(Զգործ, զգործս):

Սեռականից կազմումէ Տրականն, որ և բոլորովին նման  
է նորան. միայն եղակի թւում երբեմն ընդունումէ իւր յա-  
տուկ որոշիչ գիրը ճ: (Տան—տան. միոյ—միում):

Սեռականից կազմումէ դարձեալ Գործիականն, ընդուննե-

յով Սեռականի վերջից — (չ) կամ սորա լծորդ գիրն է: Երբ  
սեռականի վերջին գիրը ձայնաւոր է՝ յաւելանումէ — (չ).  
իսկ երբ բաղաձայն է՝ է:—Քանի—բանի-, ական—ականք \*)  
ջրոյ—ջրով:

\*) Այսինքն բառի մէջ սեռականի ն յանգը փոխուել է  
ճ, որովհետեւ է, ո, չ շրթնային առաւելից առաջ ն տառը սովո-  
րաբար դառնումէ ճ: (§ 265):

Տրականից կազմումէ Քացառականը ՚ի (յ) նախդիրով: Մի  
քանի Հոլովմանց մէջ եղակի թւում (իսկ դերանունաց նա և  
յոգնականում) ընդունումէ և է վերջաւորութիւնը:—Իտանէ,  
՚իքաղաքէ (փոխանակ՝ ՚իքաղաքիէ), յերեսաց, ՚իջրոյ, ՚ինմանէ,  
՚ինոցանէ (փոխանակ՝ ՚ինմա—է, ՚ինոցա—է):

16. Յոգնականները կազմումեն եզականներից:—Աւղղա-  
կանի և գործիականի վերայ յաւելանումէ \* գիրն, որ Հայցա-  
կանի մէջ դառնումէ \* Սեռականի վերայ յաւելանումէ յ, որ  
մնումէ Տրականի և Քացառականի մէջ ևս:

17. Իմացանք որ բառերը Հոլովումեն եօթն տեսակ:  
Այս եօթն Հոլովումները նախ և առաջ էրջո- կերպ են բաժան-  
ւում՝ Պարզ և Խառն:

Պարզ Հոլովումն ունին այն բառերն, որոնց սեռականի  
վերայ յաւելացած որոշիչ նշանագիրը պահւումէ գորանից կազ-  
մուած միւս Հոլովների մէջ ևս:—Նետի, նետիւ, նետից. սիրոյ,  
սիրով, ՚ի սիրոյ. հաւո, հաւո, հաւոց:

Իսկ Խառն Հոլովումն ունին այն բառերն, որոնց սեռա-  
կանի որոշիչ նշանագիրը միւս Հոլովների մէջ փոխւումէ:—  
Տեղոյ, տեղոս, մեծի, մեծոս. անձին, անձամբ:

18. Հետագայ աղիւսակի մէջ կարելի է տեսնել Պարզ և  
Խառն Հոլովմանց պատկերը:—

**Պ Ա Ր Զ Հ Ո Լ Ո Վ Մ Ո Ւ Ն Ք**

Նշանագիր.	1.		2.		3.		4.		5.	
	Ա.		Ե.		Ի.		Ո.		ՈՒ.	
	Օրին. Ա.		Օրին. Բ.							
Հոլովներ.	Եւ.	Յւ.	Եւ.	Յւ.	Եւ.	Յւ.	Եւ.	Յւ.	Եւ.	Յւ.
Ուղղ.	ը.	ըն.	անք.	ըր.	երք.	—	ը.	—	ը.	—
		ին.	ունք.							
		ինք.	ունք.							
Սեւ.										
Եւ.	այ.	աց.	ան.	անց.	եր.	երց.	ի.	ից.	ոյ.	ոց.
Տրւ.			եան.	եանց.	եղ.	եղց.				
Գրւ.	աւ.	աւք.	ամք.	ամքք.	երք.	երքք.	իւ.	իւք.	ով.	ովք.
	(օք).	եամք.	եամքք.	եղք.	եղքք.					
Բաց.	այ.	աց.	անէ.	անց.	երէ.	երց.	է.	ից.	ոյ.	ոց.
			ենէ.	եանց.	եղէ.	եղց.			ուէ.	ուց.
									է.	

**Խ Ա Ռ Ն Հ Ո Լ Ո Վ Մ Ո Ւ Ն Ք**

Նշանագիր.	6.		7.			
	Ի Եւ Ա.		Ո Եւ Ա.			
	Օրին. Ա.		Օրին. Ա.			
Հոլովներ.	Եւ.	Յւ.	Եւ.	Յւ.		
Ուղղ.	ը.	ըն.	ինք.	ի.	իք.	
			ունք.			
Սեւ. և Տրւ.	ի.	աց.	ին.	անց.	ւոյ.	եաց.
Գրւ.	աւ.	աւք.	ամք.	ամքք.	եաւ.	եաւք.
	(օք).				(եօք).	
Բացառ.	է.	աց.	նէ.	անց.	ւոյ.	եաց.

19. Այս օրինակների վերայ հղովելու ժամանակ անուններից ոմանք ենթարկւում են մի քանի տեսակ փոփոխութեանց՝ այն է՝

ա). Բառի վերջին վանկի մէջ եղած է գիրը փոխւում է, երբեմն էլ է. — մէր — սիրոյ. հանդէս — հանդիսի. Մովսէս — Մովսիսի կամ Մովսէսի:

բ). Նոյնպէս վերջին վանկի մէջ եղած է և տառերը սղուում դառնում են ը, որ սովորաբար չէ գրւում. — Գր — գ'րոյ. մոխիր — մոխ'րոյ. թռչուն — թռչ'նոյ:

գ). Նոյն տեղը էւ երկբարբառից զեղչւում է տառը. — Մատեն — մատէնի. որդեակ — որդէկի. ընծայելոյ, ընծայելոյ:

դ). Նոյն վանկի մէջ ու երկբարբառը փոխւում է ու. — Յոս — յոսոյ. համբոյր — համբորի. երևոյթ — երևոթի:

Փոփոխման վերոյիշեալ օրէնքներից շեղւում են երբեմն յատուկ անունները: — Արամայիս — Արամայիսայ. Տիգրէս — Տիգրէսի. Մամգուն — Մամգունայ. Բէլ — Բէլայ կամ Բէլայ:

20. Չատ անուանք գործ են ածւում միայն եզակի թւում, անյոգնական են. ինչպէս՝ խիղճ, կաթն, անդորր, հարաւ, հուր: Չատերն էլ հոլովւում են միայն յոգնակի թւում, անյոգնական են. փառք, կեանք, աղաչանք, տիեզերք, կուռք, անուրջք:

**21. ԱՌԱՋԻՆ ՀՈԼՈՎՈՒՄՆ**

**Պ ա Ր Գ Ա.**

Ե զ ա կ ի.	Աւազին օրինակ.	Յ ո գ ն ա կ ի.
Ուղղական	Տիտան	Տիտանք.
Սեռական և Տրական	Տիտանայ	Տիտանաց.
Հայցական	զՏիտան	զՏիտանս.
Գործիական	Տիտանաւ	Տիտանաւք (օք):
Բացառական	ի Տիտանայ	ի Տիտանաց.

Այս օրինակի վերայ հղովումեն հայկական և օտար յատուկ անուանց ամենամեծ մասը, որոնք իբրև յատուկ՝ յոգնակի չունին. նա և շատ անեզական յատուկ անուանք:

Հայկ	—	կայ	—	կաւ:
Արամ	—	մայ	—	մաւ.
Մեսրոբ	—	բայ	—	բաւ.
Տուր	—	րայ	—	րաւ.
Ակն	—	նայ	—	նաւ.
Աղին	—	նայ	—	նաւ.
Գէթ	—	թայ	—	թաւ.
Գաւիթ	—	ւ'թայ	—	թաւ.
Ասիա	—	սիայ	—	սիաւ.
Գալիլիա	—	լիայ	—	լիաւ.
Նանէ	—	նեայ	—	նեաւ.
(փոխանակ նէայ,	—	նէայ)		
Մանի	—	նեայ	—	նեաւ.
(փոխանակ նիայ	—	նիայ)		
Պիւթագորաս	—	րայ	—	րաւ.
Լիւսիաս	—	սեայ	—	սեաւ.
Հերմէս	—	մեայ	—	մեաւ.
Անդրէաս	—	րեայ	—	րեաւ.
Գիոս	—	դիայ	—	դիաւ.
Արտեմիս	—	մեայ	—	մեաւ.
Տրդրանուհի	—	հեայ	—	հեաւ.
Ռսկեակ	—	կե'կայ	—	կաւ.
Անուշ	—	նուշայ	—	շաւ.
Արիստակէս	—	կեայ	—	կեաւ.
Յակոբոս	—	բայ	—	բաւ.
Աշոցք	—	ցաց	—	(ցաւք) օք.
Վիրք	—	րաց	—	
Ալանք	—	նաց	—	նօք.
Մարք	—	րաց	—	րօք.

Միջագետք	—	տաց	—	տօք.
Մասիք (սիս)	—	սեաց	—	սեօք.
(փոխանակ	—	սիայ	—	սիօք).
Գուգարք	—	րաց	—	րօք.
Մոկք	—	կաց	—	կօք.

22. Գիտելիք. Օտար անուանք ա, է, ի. ա, ի. ա յանգերով այս օրինակի վերայ հղովումելիս, կորցնում են « գերն, որովհետև նոցա ուղղականը կարող է լինել և առանց այդ յանգերի. ինչպէս Հոմեր, Պիւթագոր, Յովհան, Սոկրատ, Կիւր: Իսկ նոյն յանգերով նոքա հղովումեն ուրիշ հղովմանց վերայ ևս, ինչպէս կը տեսնենք իւր տեղը:—Հայկական յատուկ անուններն էլ, որ չունին այդ յանգերը, նոյնպէս կարող են միւս հղովմանց մէկի կամ միւսի վերայ հղովուել:

23. Երկրորդ օրինակ.

Ե գ ա կ ի.

Յ ո գ ն ա կ ի.

Ո-շ.	Աղմն.	Աղմանք կամ կողմունք.
Սե- և Տր.	Աղման.	Աղմանց.
Հայց.	գԱղմն.	գԱղմանս.
Գործ.	Աղմամբ.	Աղմամբք.
Բայ.	ի Աղմանէ.	ի Աղմանց.

24. Այսպէս հղովում են՝ ա) այն բառերն, որոնք վերջաւորումեն ըն յանգով: (Գրելիս շ զեղչումէ):

բ) ա-է-ն մասնիկով ամանցուած բառերը.

գ) ա-ն կամ ի-ն յանգով բառերն, եթէ նոքա մասնիկ չեն:

Ի-ն յանգը թէ որ մասնիկ լինի՝ անհղովուել է. իսկ երբ հարկ լինի հղովուել՝ կը փոխուի ա-ն յանգի և կը հղովուի վերի օրինակի վերայ. — Գոչի-ն — գոչումն, գոչման. հնչի-ն — հնչումն, հնչման:

Ակն	կան	կամբ.	կունք.
Սերմն	ման	մամբ.	մունք.
Հիւան	սան	սամբ.	սունք.
Ուտումն	ման	մամբ.	մունք.
Իմաստութիւն	թեան	թեամբ.	թիւնք.
Սիւն	սեան	սեամբ.	սիւնք.
Անկիւն	կեան	կեամբ.	կիւնք.
Անուն	ունան	ամբ.	անք.
Տուն	տան	տամբ.	տունք.
Ձեղոն	ունան	ամբ.	անք.
Վարդանանք	նանց	նամբք.	
Աղամանք	մանց	մամբք.	
Սուքիասեանք	սեանց	սեամբք.	
Հռիփսիմեանք	մեանց	մեամբք.	
Արտեանունք	նանց	նամբք.	
Մկանունք	նանց	նամբք.	
Հայկազունք	զանց	զամբք.	
Գողթն	թան	թամբ.	

25. Այս օրինակի վերայ Հոլովումեն ի՛նչ երբեմն էլ ա՛նչ, էա՛ն, նա և իսկ, որո՞ւմ, որո՞ւմ, որո՞ւմ լանգերով բառերից շատերը:  
 Ծաղիկ — կան — կունք. Կորուստ — ստեան — տեամբ.  
 Աղջիկ — կան — կունք. Ժողովուրդ — ղեան — ղեամբ.  
 Կորեակ — եկան — կամբ. Մտունդ — ղեան — ղեամբ.  
 Հանգիստ — ստեան — տեամբ. Ծնունդ — ղեան — ղեամբ.

26. Իբրև բացառութիւն՝ այս օրինակի վերայ Հոլովում են և հետևեալները. —

Մահ	հուան	ամբ. (անյողնական)
Պաշտօն	տաման	մամբ. — մունք — մանց.
Ստին	ստեան	ստեամբ — ստինք — ստեանց.
Տիւ	տուրնջեան	ջեամբ.
Վաղիւ	ղուեան	եամբ.
Տեսիլ	լեան	լեամբ.

27. ԵՐԿՐՈՐԻ ՀՈՂՈՎՈՒՄՆ

Պ ա Ր Ղ Ե.

Ե զ ա կ ի .

Ո-շ	Կայսր.	Ապրդ.	Կայսերք.	Աստեղք.
Սեւ. և Տը.	Կայսեր.	Աստեղ.	Կայսերց.	Աստեղց.
Հայց.	զԿայսր.	զԱստղ.	զԿայսերս.	զԱստեղս.
Գործ.	Կայսերբ.	Աստեղբ.	Կայսերբք.	Աստեղբք.
Բայց.	իԿայսերէ.	յԱստեղէ.	ի Կայսերց.	յԱստեղց.

Այս Հոլովման վերայ են եւ կամ եւ վերջացած անունները (գրելիս ը ղեղջուով): նոյնպէս և շատ իւր վերջացածներ:

Ոսկր	կեր.	կերբ.	կերք.
Տարր	րեր.	րերբ.	րերք.
Անգղ	գեղ.	գեղբ.	գեղք.
Կոճղ	ճեղ.	ճեղբ.	ճեղք.
Ալիւր	լեր.	լերբ.	լերք — լերց
Աղբիւր	բեր.	բերբ.	բիւրք կամ բերք.
Գուտար	դստեր.	տերբ.	տերք
Տիեզերք	զերց.	զերբք.	—

28. Գլտեիք. Այսպէս Հոլովուող բառերի յոգնակին և եզ. գործ. կարող են Հոլովուել նաև Ա. Հոլովման 1 օրինակի նման. — կայսր, կայսեր, կայսերաւ, կայսերք, կայսերաց, կայսերօք, Աստղ. աստեղ, աստեղաւ, աստեղք, աստեղաց, աստեղօք, և այլն:

29. ԵՐՐՈՐԻ ՀՈՂՈՎՈՒՄՆ.

Պ ա Ր Ղ Ի .

Ե զ ա կ ի .	Տ ո գ ն ա կ ի .	
Ո-շ.	Բան.	Բանք.
Սեւ. և Տը.	Բանի.	Բանից.



15536-58  
(11004)  
(116405)

Հայց.	դիւան.	դիւան.
Գործ.	ճանիւ.	ճանիւք.
Բայց.	ի ճանէ.	ի ճանից.

Այս հոլովման վերայ հոլովուող բառերից շատերի համար որոշ հոլովական նշանացոյց չկայ. բայց և այնպէս գիտելի է, որ այսպէս կը հոլովուին.

ա) Այն բազմականկ անուններն, որոնց վերջին վանկի մէջ կամ վերջը կայ ոչ կամ ոչ երկբարբառը:

բ) Էսն, է վերջացածները:

գ) ու, ուս, էս, աս, իս և իսս վերջացած յատուկ անուններն, որոնք այս օրինակի վերայ ևս կարող են հոլովուիլ, ինչպէս որ Ա. հոլովման 1 օրինակի վերայ:

Քահանայ	— լի	— լիւ.	— լից	— լիւք.
Ընծայ	— լի	— լիւ.	— լից	— լիւք.
Քրիստոնեայ	— նէի	— նէիւ.	— նէից.	
Հրեայ	— ըէի	— ըէիւ.	— ըէից.	
Ճառագայթ	— թի	— թիւ.	— թից.	
Իշխոյ	— իսի	— իսիւ.	— իսից.	
Համբոյր	— ուրի	— ուրիւ.	— ուրից.	
Է.	— էի	— էիւ.	— էից.	— էիւք.
Փարգարէ.	— էի	— էիւ.	— էից.	— էիւք.
Մատեան	— տենի	— տենիւ.	— տենից.	— տենիւք.
Մամիկոնեան	— նենի	— նենիւ.	— նենից.	— նենիւք.

(կամ նեանց.)

Պետրոս	— սի	— սիւ.
Գրեգորիոս	— սի	— սիւ.
Աննա	— այի	— այիւ.
Եւրոպա	— լի	— լիւ.
Գաղղիա	— լի	— լիւ.
Յովհաննէս	— նիսի	— նիսիւ.
Ազրիպաս	— սի	— սիւ.
Հաց	— ցի	— ցիւ.

Սայ	— լի	— լիւ.	— լիւք.
Սիրտ	— սրտի	— սրտիւ.	
Հանդէս	— դիսի	— սիւ.	
Աղօթք	— թից	— թիւք.	

### 30. ՉՈՐՐՈՐԻ ՀՈՂՈՎՈՒՄՆ

Պ ա Ր Ղ Ո .

Ե զ ա կ ի .

Յ զ գ ն ա կ ի .

Ուշ.	Գործ	Գործք.
Սէս. և Տը.	Գործոյ	Գործոց.
Հայց.	զԳործ.	զԳործս.
Գործ.	Գործով.	Գործովք.
Բայց.	ի Գործոյ.	ի Գործոց.

Այսպէս հոլովուում են՝ ա). այն անուններն, որոնց յանգն է ուս, էս, ուսծ և յաճախ ուս մասնիկը.

բ). է վերջացած միականկ անունները.

գ). է վերջացած բազմականկներից՝ հոգի, որբի, ուկի և յի մասնիկով ածանցուածներն, որոնք մի տեղացի լինելը կը նշանակեն:

Այս բազմականկների է յանգը հոլովելու ժամանակ կը սղուեի կը դառնայ ու. (Որդե—որգ—ոյ, քաղաքացե—քաղաքաց—ոյ. փոխանակ՝ Որդեոյ, քաղաքացեոյ):

դ). Անորոշ դերբայներն՝ էլ ոչ ուշ, էլ վերջաւորուածեամբ, որոնք անյոգնական են. այսպէս և անցեալ դերբայներն էաշ յանգով եզակի և յոգնակի:

ե). Մեծազոյն մասն այն բառերի, որոնց վերջին վանկի մէջ կայ ու երկբարբառը:

Մնացածների համար որոշ նշանացոյցներ չկան:

Գիտուն	— տ'նոյ	— նով.	տունք.
Անասուն	— ս'նոյ	— նով.	սունք.

Վերջին	— ջնոյ	— ջնով.	ջինք.
Երկնային	— յնոյ	— յնով.	յինք.
Առեղծուած	— ծուածոյ	— ծով.	
Արարած	— ծոյ	— ծով.	
Գի	— Գիոյ	— գիով.	
Թի	— Թիոյ	— Թիով.	
Կագմել	— լոյ	— լով.	
Թողուլ	— զ'լոյ	— լով.	
Հանգուցեալ	— ցելոյ	— ցեալք—ցելոց.	
Հոգի	— գւոյ	— գւով.—գւոց — գւովք.	
Հայաստանցի	— ցւոյ.	— ցիք — ցւոց — ցւովք.	
Վւամշապուհ	— պհոյ	— պհով.	
Կերակուր	— կրոյ	— կրով. — կրոց.	
Անուրջք	— ըջոց	— ըջովք.	

31. ՀԻՆԳԵՐՈՐԳԻ ՀՈՒՎՈՒՄՆ

Պ ա ը գ ՈՒ.

Ե զ ա կ ի.		Յ ո գ ն ա կ ի.
Ուշ.	Ծով.	Ծովք.
Սէւ և Տը.	Ծովու.	Ծովուց.
Հայց.	գԾով.	գԾովս.
Գործ.	Ծովու.	Ծովուք.
Բայ.	ի Ծովէ.	ի Ծովուց.

Այս օրինակի վերայ հոլովելի անուանց համար որոշ նշանացոյց չկայ. բայց գիտելի է, որ ըստ այսմ հոլովումեն ոչ, առ յանգով բառերի մեծագոյն մասն:

Հով	— վու	— հովուց.	Առիւծ	— ծու	— ծուց.
Կով	— վու	— վուց.	Աղուէս	— իսու	— չմհ-եծու.
Նաւ	— ւու	— ւուց.	Ինծ	— ընծու	— ծուց.
Կաքաւ	— ւու	— ւուց.	Ուղտ	— ուղտու	— տուց.

Զգեստ	— տու	— տուց.	Յուլ	— ցլու	— ցլուց.
Յովհան	— նու.		Մահ	— հու	—
Մարիամ	— մու.		Բարք	— ըուց	— ըուք.
Արև	— ւու.		Պարտ	— տուց	— տուք.
Ովկիան (ոս)	— նու.		Գար	— ըու	— ըուց.

32. Գիտելիք. 1. Այս հոլովման վերայ հոլովուող բառերից ոմանց եզակի բացառականը կը լինի և ուէ. ՚ի նախանձուէ, ՚ի վնասուէ, յայգուէ, և այլն:

2. Փոքր, ասր, մեղր, բարձր, կարծր, Թանձր, ծաղր, ծանր, մանր, քաղցր՝ հոլովուում են այս օրինակի վերայ հոլովակերտ ձայնաւորներից առաջ բաց Թողլով ր գերը և յոգնակի Թուում յոգնականացուցիչ գրերից առաջ ընդունելով ու.—Մանու.—իմանուէ—մանուք, մանուց. կարծու.—իկարծուէ—կարծուք—կարծուց. ծանու.—իծանուէ — ծանուք — ծանուց. Թանձու.— Թանձուք — Թանձուց: Սոցանից ուր, ճէշք՝ անյոգնական են: Բայց՝ յոգ. կը լինի բարձուք—բարձանց—բարձամքք:

33. ՎԵՑԵՐՈՐԳԻ ՀՈՒՎՈՒՄՆ.

ԽՍ.ՈՒՆ Ի-Ս.

Առ ա ջ ի ն օ թ ի ն ա կ.

Ե զ ա կ ի.		Յ ո գ ն ա կ ի.
Ուշ.	Նշան.	Նշանք
Սէւ և Տը.	Նշանի.	Նշանաց
Հայց.	զՆշան.	զՆշանս
Գործ.	Նշանաւ.	Նշանօք (աւք)
Բայ.	ի Նշանէ.	ի Նշանաց.

Այս օրինակի վերայ հոլովուող բառերի համար ևս ընդհանուր որոշիչ նշանացոյց չկայ. բայց և այստեղ գիտելի է,

որ այսպէս հորովում են — որ, հան, ան, եզէն, բուն, ոյ, նոյ, ին, ոչ  
ան, եան, ոյն, որո մասնակով անանցուածները. նոյնպէս և ան  
յանգով անեզականներն:

Երկնաւոր	— ըիւ —	րաւ.	րաց—րօք (աւք)
Ջինուոր	— ըից —	րաւ.	րաց—րօք.
Քանական	— նի —	նաւ.	
Խթան	— նի —	նաւ.	
Հողեղէն	— ղինի —	նաւ.	
Գործարան	— նի —	նաւ.	
Դպրոց	— ցի —	ցաւ.	
Գլխանոց	— ցի —	ցաւ.	
Քարոզիչ	— չի —	չաւ.	
Կարող	— ղի —	ղաւ. (հաճ ղիւ)	
Խօսնակ	— կի —	կաւ.	
Քանակ	— կի —	կաւ.	
Մանեակ	— կի —	կաւ.	
Խարոյկ	— ուկի —	կաւ.	
Կշռորդ	— ղի —	ղաւ.	
Մահկանացու	— ուի —	ուաւ.	
Պարզեատու	— ուի —	ուաւ.	
Քուրաստան	— նի —	նաւ.	
Աղաջանք	— նաց —	նօք.	
Քաղճանք	— նաց —	նօք.	
Պատերազմ	— մի —	մաւ.	
Պարզև	— ի —	աւ.	
Լեզու	— ի —	աւ.	
Դև	— ղիւի —	աւ.	
Հովիւ	— ուի —	աւ.	
Երկիր	— կրի —	րաւ.	
Մահիճք	— ճաց —	ճօք.	
Խելք	— լաց —	լօք.	
Կեանք	— նաց —	նօք.	

34. Երկրորդ ասորի նա կ.

Ն-շ.	Անճն.	Անճինք.
Սեւ. և Տր.	Անճին	Անճանց.
Հայց.	զԱնճն.	զԱնճինս.
Գործ.	Անճամբ.	Անճամբք.
Բայց.	յԱնճնէ.	յԱնճանց.

Այս հորովման վերայ հորովում են ըն վերջացած բառերի մեծ մասն. (ը զեղչումէ սովորաբար):

Ազն	— ղին	— զամբ.	— ղինք.
Խաշն	— շին	— շամբ.	
Քեռն	— ռին	— ռամբ.	
Հարսն	— սին	— սամբ.	
Միանճն	— ճին	— ճամբ.	— ճունք.
Ողն	— ղին	— ղամբ.	— ղունք.
Մասն	— սին	— սամբ.	— սունք.
Կաթն	— թին	— թամբ.	

35. Գիտելիք. Այս օրինակի վերայ հորովուող բառերից ոմանց եզ. բացառականը կարող է երկու կերպ լինել. ՚ի խաշնէ—՚ի խաշանէ, ՚ի գառնէ—՚ի գառանէ. ՚ի բեռնէ—՚ի բեռանէ: Եւ ոմանց յոգնակի ուղղականը փոխանակ ՚ի: յանգի կը վերջաւորուի ան. Ափունք, ղիւցաղունք, մատունք և այլն:

36. ԵՐԹՆԵՐՈՐԴ ՀՈՒՎՈՒՄՆ

ԽԱՌՆ Ո—Ա.

Ե զ ա կ ի.	Յ ո գ ն ա կ ի.	
Ո-շ.	Մատանի	Մատանիք.
Սեւ. և Տր.	Մատանույ	Մատանեաց.

Հայ.	զՄատանի	զՄատանիս
Գրծ.	Մատանեալ	Մատանեօք.
Բայ.	ի Մատանույ	ի Մատանեաց.

Այս հորովման վերայ հորովումեն ի վերջացած բազմա-  
վանկներն, բացի Չոր. հորովման վերայ եղածներից: Այսպէս  
կարող են հորովուիլ նաև և շատ էայ յանգով բառեր յոգնակի  
Թւում:

Առաքիներ	— նույ — նեալ.
	— նիք — նեաց — նեօք.
Խնձորենի	— նույ — նեալ.
Ընտանի	— նույ — նեալ.
Եկեղեցի	— ցույ — ցեալ.
Թագուհի	— հույ — հեալ.
Աւագանի	— նույ — նեալ.
Աստուածուհի	— հույ — հեալ.
Աւետիք	— տեաց — տեօք.
Երախտիք	— տեաց — տեօք.
Արևելեայք	— լեայց կամ լեաց.
Հայաստանեայք	— նեայց կամ նեաց.
Գուղնաքեայք	— քեայց կամ քեաց.
Սիւնիք	— նեայց — նեօք.

**ՋԱՐՏՈՒՂԻ ՀՈՒՈՎՄՈՒՆԲ.**

**37.** Կան մի քանի անուններ, որոնք չեն հորովում նա-  
խընթաց կանոնաւոր հորովմանց ոչ մէկի վերայ ամբողջապէս,  
այլ ունին առանձին հորովումք. ուստի և կոչուումեն Ջար-  
տուղի: Գոքա բոլորն էլ ազգակցաց և մերձաւոր անձանց ա-  
նուններ են, բացի Գիւլ և օր բառերից:

**38. Ե զ ա կ ի. Յ ո գ ն ա կ ի.**

Ուլ.	Այր.	Արք.
Սեւ. և Տր.	Առն.	Արանց.

Հայ.	զԱյր.	զԱրս,
Գրծ.	Արամբ.	Արամբք
Բայ.	յԱռնէ.	յԱրանց.

Այսպէս հորովումեն նաև այլ բառով բարդուածներն.

Քեռայր	— առն — րամբ.
Սկեսրայր	— առն — րամբ.
Խօսնայր	— առն — րամբ.

Տէր (իւն այլ, որ է մեծ, հօր այր) — տեառն  
(փոխանակ՝ իւն առն) տեարբ կամ տերամբ.  
տեարց կամ տերանց, տեարբք կամ տերամբք.  
Տանուտէր — տեառն — տեարբ.

**39. Ե զ ա կ ի. Յ ո գ ն ա կ ի.**

Ուլ.	Հայր.	Հարք.
Սեւ. և Տր.	Հօր (Հաւր).	Հարց — Հարանց.
Հայ.	զՀայր.	զՀարս.
Գրծ.	Հարբ.	Հարբք — Հարամբք.
Բայ.	ի Հօրէ.	ի Հարց — ի Հարանց:

Այսպէս նաև և այլ, էջայր, և սոցանից բարդուածներն. —  
Նախահայր, տիրամայր, հօրեղբայր, տեառնեղբայր, Հարսն-  
եղբայր:

**40. Ե զ ա կ ի. Յ ո գ ն ա կ ի.**

Ուլ.	Կին	Կանայք
Սեւ. և Տր.	Կնոջ	Կանանց
Հայ.	զԿին	զԿանայս
Գրծ.	Կանամբ կամ կնալ	Կանամբք
Բայ.	ի Կնոջէ	ի Կանանց.

Այսպէս և՛ տ ի կ ի ն, ա ո ն ա կ ի ն, տանտիկին:

41. Եզրակի.

Յոգնակի.

Ուշ.	Քոյր	Քորք.
Սէւ. և Տր.	Քեռ (քուեր)	Քերց (քուերց).
Հայց.	զՔոյր	զՔորս.
Գործ.	Քերք.	Քերքք.
Բոյ.	ի Քեռէ.	ի Քերց.

Այսպէս նա և՛ հօրաքոյր, մորաքոյր, հարսնքոյր,

42. Եզրակի.

Յոգնակի.

Ուշ.	Գիւղ (գեւղ).	Գիւղք (գեւղք).
Սէւ. և Տր.	Գեղջ.	Գիւղից.
Հայց.	զԳիւղ.	զԳիւղից.
Գործ.	Գիւղիւ.	Գիւղից.
Բոյ.	ի Գեղջէ.	ի Գիւղից.

Սոյնպէս և՛ քաղաքագիւղ.

43. Եզրակի.

Յոգնակի.

Ուշ.	Օր (աւր).	Աւուրք
Սէւ. և Տր.	Աւուր.	Աւուրց
Հայց.	զՕր.	զԱւուրս
Գործ.	Աւուրք.	Աւուրքք
Բոյ.	յՕրէ.	յԱւուրց

Այսպէս են՛ կէսօր, հասարակօր:

ԱՆՈՒԱՆՅ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԴԻՏԵԼԻՔ.

44. Սեռի մասին: Հայերէն լեզուի մէջ քերականական սեռ չունին անուանք, ինչպէս շատ ուրիշ լեզուների մէջ. այլ իբնէ՛ արու առարկաների անուններն որոշուած են, էգ առարկաներինն՝ իգական. միւս անուններն, որ անշունչ և վերացական առարկաներ կը նշանակեն՝ ոչ արական կարող են լինիլ և ոչ իգական, այլ չէրէ: Սակայն կան անուններ, որ միանգամայն

թէ՛ արու և թէ՛ էգ շնչաւոր առարկայ կը նշանակեն, այդպիսիք կոչուում են հասարակ: — մամմիթի, լիլի միմնա — միլ միմնա

Արուին են՛ հայր, եղբայր, փեսայ, այր, խոյ, աքաղաղ, կանգ, և՛ այլն: Եւրոպացիներու մոտ զգուստա լուտուսն է:

Իգական են՛ մայր, քոյր, հարսն, կին, մաքի, մատակ, գամբիկ, և՛ այլն: Եւրոպացիներու մոտ զգուստա լուտուսն է:

Հասարակ են՛ մարդ, աղանի, ձի, առիւծ, տղայ, մարգարէ, և՛ այլն: Եւրոպացիներու մոտ զգուստա լուտուսն է:

Չէրէ են՛ ծառ, տուն, քաղաք, խոտ, ջուր, աստղ, և՛ այլն.

Բայց զիտեղի է, որ շատ արական սեռի յատուկ անուանք ունի կամ ուրիշ և անշոյ վերջաւորութեամբ, և ոմանք հասարակ անուանք միայն ունի վերջաւորութեամբ՝ ստանում են իգականի նշանակութիւն. — Վարդուհի, Սմբատուրհի, Սահականոյշ, Անուշվոամ, սրբուհի, տիրուհի, թագուհի, իսկուհի, քրմուհի, աստուածուհի: Վարդուհի, Սմբատուրհի, Սահականոյշ, Անուշվոամ, սրբուհի, տիրուհի, թագուհի, իսկուհի, քրմուհի, աստուածուհի:

45. Հոլովների մասին: Հոլովմանց մէջ երեւցած հոլովական յանգերից գատ՝ երեք նշագիր էլ կան, որ յատուկ են սեռական և տրական հոլովներին՝ ր, ջ, ճ: Սօքա մի քանի հոլովմանց մէջ յաւերանարով անուանը՝ կազմում են լիշեալ հոլովները: ր նշանազրի սովորական գործածութիւնը կը տեսնենք դերանուանց մէջ. ջ նշանազրի սովորաբար ր. և ի. հոլովմանց մէջ. իսկ ճ՝ թէ՛ դերանուանց և թէ՛ նոյն ր. և ի. հոլովմանց մէջ: Այսպէս կ'ասուի. Ամսոյ, մարդոյ, միոյ, տնիոյ, տեղոյ, եկեղեցւոյ, դալարոյ, սրբում, անցելում, այլում, մարդում, առաջում, աշում: Նոյնպէս և այս հոլովներից կազմուած բացառականի մէջ. ՚ի միոյէ, ՚ի տեղոյէ, ՚ի կնոյէ, ՚ի յայմէ, ՚ի յաջմէ, ՚ի ձախմէ: Եւ կամ ՚ի նախգրիւ տրական. ՚ի դալարոյ, ՚ի բարոյ, ՚ի դիպահոյ, ՚ի մարդում, ՚ի մարմնում, ՚ի սրբում:

46. Ըստ անգամ ճայնաւորից լեռոյ ր, ջ, ր գրով վերջացած անուանք՝ Ա. հոլովման 2 օրինակի և Բ. հոլովման վերայ եղած բառերի նման՝ գործիական են դառնում ճայրից

Բ գիրն ընդունելով. (այս դէպքում Բ—ից առաջ ն փոխուած է) :  
Ամենևին—ամենևինմբ, վեցթեւեան—վեցթեւեամբ, հուր—հուրբ,  
սուսեր—սուսերբ, ճեղ—ճեղբ :

47. Յատուկ անուանք ըստ իւրեանց նշանակութեան ան-  
յոգնական են. սակայն երբեմն հասանալի կամ իբր մասնա յատուկ-  
ները գործ են ածուում յոգնակի ևս. ինչպէս՝ Տիրգրանք, Վարդանք,  
Քրիստոսք, Զաքարիայք, Քրիզորեանք, Ներսիսեանք :

48. Երբեմն առանձին ոճով և իմաստով անհաշիւ բա-  
ռերը գործ են ածուում եզակի թուի, կամ թէ անյոգնակի անէին  
յոգնակի թուի մէկ կամ միւս հոլովի մէջ. օրինակ՝ Միտ դնել,  
Կամ եղև ինձ, Զմտաւ ածել, Զինչ մեղ է նոցա : Հուրք, յոյսք,  
ամօթք, ոսկիք, պղինձք, յոյսք. այսինքն՝ խարոյկներ, ճրագ-  
ներ, ամօթալի գործեր, ոսկի դրամներ, պղնձի անօթներ, յու-  
սալի գործեր :

49. Բացի + յոգնականացուցիչ գրից՝ բառերը յոգնակի են  
գարձնում հետեւեալ յանգերն ևս.

— Ան. Մեղանք, ձաղանք, աղաչանք, նուանք, խրախու-  
սանք.

— Այ, էայ. Աղախնայք, այգեստանեայք, պուէտեայք,  
դարբնայք :

— Ան, էան. Թիան, ձիան, իշան, խուժան, գրեան, նա-  
խարարեան, զօրագլխեան, թղթեան, մորթեան, Հիւպատեան :

— Ի. Արմտիք, անտիք, կարծիք, տոկոսիք.

— Ոյ. Քահույք, հաույք, բարույք, բաշխույք :

— Ուն. Առիւծուք, ճրագուք, նուագուք, պատերազ-  
մուք, սարկաւազուք, երիցուք :

— Ան. Նամականի, պատգամանի, աւագանի, հանդեր-  
ձանի, աստեղանի :

— Եր, էար, նէար. Վաներ, գրեր, աչեր, վանեար, որեար,  
բարձկնեար, նաւկնեար, բանեար, աղատորեար :

— Տի, որի. Մանկտի, ծակտի, ոսկրտի, փորտտի :  
— Մասն. Անգաստան, տանեստան, այգեստան :

50. Երկրորդական հոլովների մասին : Բացի մեզ  
յայտնի վեց հոլովներից՝ Հին քերականներից ոմանք ընդու-  
նումէին ուրիշ հոլովներ ևս, որոնք ընտիր քերականներից մեր-  
ժուած են, որովհետև չունին իրանց յատուկ հոլովական ձևն  
և միշտ կարող են փոխարինուիլ ուրիշ հոլովներով զանազան  
նախադրութեանց միջնորդութեամբ, և են հետեւեալները.

ա) Նախարի—Տրակն, որ է Հայցական հոլովը փոխանակ զ  
նախգրի ուրիշ որ և է նախգրով՝ դրուած շարժա՛նց ցոյց տուող  
բայերի մօտ :— Գնալ ի գաղա՛ս. անցանել ընդ ծով՝ գրել սո՛ւնս. իս-  
կրգբանէ յէլերջ՝ ելանել ըստ հրահան :

բ) Պարսակն, որ է զ նախգրով Բացառական, նշանակե-  
լով հասն, վրայո՛ւ : Զարախօսիլ զնմանէ. ազգ առնել զամենչո՛ւնց :

գ) Պարսակն, որ է զ նախգրով Գործիական, նշանակե-  
լով շարժը :— Պարիսպ ածել զգաղա՛սս. պատել զնով՛ս, սաւառ-  
նել զգլխով :

դ) Ներգայան, որ կազմուած է նախգրի յաւելմամբ Հայ-  
ցական հոլովից, իսկ եզակի թուում երբեմն և Տրական հոլովից  
(ուր բացառականի հետ չի նոյնանալ) և զըլումէ դարսարսն  
ցոյց տուող բայերի մօտ :— Նստիլ ՚ի գան, բնակիլ յանասանս.  
կեալ յաշխարհի, գրել ՚ի գիրս :

Ոմանք ընդունում էին և Կոչական, որ ոչ ալ ինչ է,  
եթէ ոչ պարզ Ուղղական հոլով կանչելու մտքով գործածած :

51. Հոլովմասնց մասին : Ոմանք անուանք պատա-  
հում են հոլոված մերթ մէկ, մերթ միւս հոլովման վերայ,  
մանաւանդ նմաձայն յանգով. — Սեան—սիւնի, խորհրդի—խոր-  
հրդոյ—խորհրդեան, բոլորով—բոլորիւ, ի թեւոյ—ի թեւէ, դա-  
սու—դասով—դասիւ, նշանաւ—նշանիւ, վայրաց—վայրուց, վա-  
նից—վանուց—վանաց, անձրևաց—անձրևոց, նաւու—նաւով—  
նաւաւ, Հայկաւ—Հայկիւ, Մարիամայ—Մարիամու, և այլն :

52. Անուններից ոմանք եզակի թուում հոլովում են մէկ  
հոլովման վերայ, յոգնականում՝ միւս. — Ժողովրդեան—Ժողովրդ-  
դոց, շնորհիւ—շնորհօք, աղախնոյ—աղախնեայց (նայք)—

նեօք, երիցու— երիցունք— երիցանց, ձեռին— ձեռամբ— ձեռաց  
— ձեռօք, ոտին— ոտամբ— ոտք— ոտից— ոտիւք, և այլն:

53. Միւկնոյն անուանք նշանակութիւնը փոխելով հո-  
լովումեն ուրիշ ուրիշ հոլովմանց վերայ. օրինակ՝

Այր (սարսր)	— իւ.	Այր (ճարսր)	— արամբ.
Գալլ (էւրոպիէն երկուն)	— իւ.	Գալլ (հինգունի)	— լով.
Գեղ (գիւղ)	— զիւ.	Գեղ (գիւղեցիական)	— ով.
Դի (տիւն)	— ով— օց.	Դիք (չարսրամբ)	— զից, դիօք.
Կոյս (աշխատ)	— սիւ.	Կոյս (կոյս)	— սօք.
Մայր (ծայր)	— իւ.	Մայր (ծայր)	— մարբ.
Որթ (խաշողէնի)	— ով.	Որթ (հարկ)	— ու.
Սան (այլն)	— իւ.	Սան (արտագիր)	— նու.
Փող (արհար)	— իւ.	Փող (փշէլի)	— զով.
Օդ (աշխատելի)	— իւ.	Օդ (օր)	— զով.

54. Անուանք շատ անգամ բարդուելիս կամ ածանցուե-  
լիս փոխումեն հոլովումն. որպէս՝

Աստուած	— ծոյ	— ծով.	Անաստուած	— ծի	— ծից.
Գործ	— ծոյ	— ծով.	Ազգեգործ	— ծաց	— ծօք.
Սէր	— ըոյ	— ըով.	Իմաստասէր	— ըաց	— ըօք.
Ձէն	— նու	— նուց.	Սպառազէն	— զինի	— նաց.
Խրատ	— տու	— տուց.	Անխրատ	— տից	— տիւք.
Խօսք	— սից	— սիւք.	Բարեխօս	— սաց	— սօք.
Կիրք	— կրից	— ըիւք.	Ձինակիր	— կրի	— կրաւ.
Սիրտ	— տի	— տիւ.	Խստասիրտ	— տաց	— տօք.
Հնորհ	— հի	— հաց.	Ապաշնորհ	— հից	— հիւք:

գնւելով ամբողջ փոխառու մղմամբն զու մարտաբանի իմ  
յանա՛յ զիս յայնս ընդ մե թ. Բ. արձան զմեզմասն մարտաբան  
... մե կուրպայ զգնմամբն արտա զ մեզմով մղմամբն արտ  
բնմարտ յամեմ զ մե մեզմով մղմամբն արտ  
**ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ**

55. Ածական անուանք գոյականի հետ միասին է վարում  
որպէս նորա մակերևոյց: Երբ խօսքի մէջ գոյականը դրուած է  
ածականը գոյականի նշանակութիւն է ստանում. օրինակ՝ Ար-  
արտ իհաւատոց կեցցեն. այսինքն արդար մարդիկ. Նահատա-  
կեցաւ արքէն. այսինքն այլն սուրբ. ևն:

56. Ածական անուանք երկու տեսակ են. Որակական  
և Յարաբերական: Որակական ածականները ցոյց են տա-  
լիս առարկաների որպիսութիւնը. օրինակ՝ Բարձր լեռան, ան-  
բարձր վարք, արմար վարդ:— Իսկ յարաբերականները ցոյց են  
տալիս առարկաների միջի յարաբերութիւնը. օրինակ՝ եթէ ա-  
սենք շրային կենդանի, աշխատ տախտակ, փայտէն արկղ, արտա-  
բան հաշիւ, ևն. մենք ուզումենք հասկացնել ջրի և կենդա-  
նու, պղնձի և տախտակի, փայտի և արկղի, քաղաքի և հա-  
շուի մէջ եղած յարաբերութիւնը, կապը:— Յարաբերական ա-  
ծականները միշտ կազմումեն գոյականից որ և էցէ պատշա-  
ճաւոր մասնիկով:

57. Որակական ածականները մի որ և է առարկայի  
որպիսութիւնը կարող են ցոյց տալ առաւել սպասելի կամ ա-  
ճեցուցած աստիճանով: ուստի որակական ածականներն երեք  
աստիճան ունին՝ Իրական, Բարդաստիճան և Գերաստիճան:

Իրականները ցոյց են տալիս առարկայի որպիսութիւնը  
պարզապէս առանց աճեցնելու:— Մեծ, սուրբ, սպիտակ, լաւ,  
քաջ, վայելուց:

Բարդատականներն՝ առարկան բարդատելով իւր նմաննե-  
րի հետ՝ նորա նշանակութիւնը սաստկացրած են ցոյց տալիս,  
և դորա համար դրական ածականը կամ բարդում է գոյն բա-  
ռով և կամ ընդունում է ևս, աստիճան բառերը:— Մեծագոյն,  
սրբագոյն, առաւել սպիտակ, լաւ ևս, քաջագոյն, ևս վայելուց:

Իսկ Գերադրական ածականներն առարկայի որպիսութիւնը ծայրագոյն աստիճանի աճեցուցած են ցոյց տալիս, որի համար զրականներն, երբեմն և բաղդատականները բարդուում են *աւն*, *գէր*, *եւ*, *երէ* բառերով և կամ ընդունում են հետեւեալ բառերից մէկը—*աւ*, *հարի*, *յոյժ*, *ամենայն*, *երից*, *անհնարին*, *եւ*—*զան զեւ*— Ամենասուրբ, գերապատիւ, եռամեծար, երեքարբեան, և՛ս վատթար, կարի սուտ, յոյժ իմաստուն, ամենևին բարի, երիցս երանեալ, մահնարին դառն, ևս քան զևս հօր:

Յարաբերական ածականներն աստիճաններ չունին:

կարելի չէ ասել երէնայնորէն, որով երէնայնայն, իրի *աւն*, *յոյժ որայնայն* և *այն*:

**58.** Ածականը կարող է լինիլ իւր գոյականից և՛ նախադաս և՛ յետագաս: Առ հասարակ յետագաս ածականները հոլովում են գոյականի հետ, նախադասները չեն հոլովում. սակայն երկայն ածականները սովորաբար յետագաս ժամանակն էլ չեն հոլովում, իսկ կարճերը՝ նախադաս ժամանակն էլ հոլովում են:

Նախդիրը պէտք է զնեւ միայն նախադասի վերայ, թէ՛ գոյական լինի թէ՛ ածական. բայց կը պատահի երկուսի վերայ էլ նախդիր զնեւ, երբ նոքա ուրիշ միջանկեալ բառերով բաժանուած լինին:

Ահաւասիկ ածականները հոլովման մի քանի օրինակներ.—

**59. Ե զ ա կ ի .**

**Յ ո գ ն ա կ ի .**

Ո-շ.	Բարի պտուղ.	Բարի պտուղք.
Սեւ. և Տր.	Բարի պտղոյ.	Բարի պտղոց.
Հայց.	զԲարի պտուղ.	զԲարի պտուղս.
Գործ.	Բարի պտղով.	Բարի պտղովք.
Բայց.	ի Բարի պտղոյ.	ի Բարի պտղոց.

**60. Ե զ ա կ ի .**

**Յ ո գ ն ա կ ի .**

Ո-շ.	Պտուղ բարի.	Պտուղք բարիք.
Սեւ. և Տր.	Պտղոյ բարևոյ.	Պտղոց բարեաց.
Հայց.	զՊտուղ բարի.	զՊտուղս բարիս.
Գործ.	Պտղով բարեաւ.	Պտղովք բարեօք.
Բայց.	ի Պտղոյ բարևոյ.	ի Պտղոց բարեաց.

**61. Ե զ ա կ ի .**

**Յ ո գ ն ա կ ի .**

Ո-շ.	Քաջ այլ.	Քաջ արք.
Սեւ. և Տր.	Քաջի առն.	Քաջաց արանց.
Հայց.	զՔաջ այլ.	զՔաջ արս.
Գործ.	Քաջաւ արամք.	Քաջօք արամքք.
Բայց.	ի Քաջէ առնէ.	ի Քաջաց արանց.

**Գ .**

**ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒՆ .**

**62.** Թուական անունը նշանակում է առարկայի թիւը, քանիս կամ քանիներորդ լինիլը: Առաջին տեսակ թուականները կոչւում են Քաշակաւն, երկրորդ տեսակները՝ Գասակաւն: Քանակական են՝ մի, երկու, տասն, հարիւր, հազար, բիւր: Դասական են՝ առաջին կամ առաջներորդ, երկրորդ, հինգերորդ, տասներորդ, վեշտասներորդ, յիսներորդ, երկեքիւրերորդ:

Բացի այս գլխաւոր թուականներից կան մի քանի երկրորդական թուականներ ևս, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ քանակականները կրկնուածն կամ ածանցուածն. սոքա են՝ Բաշխական, Զատական և Անմնեական:

Բաշխարհի նոյն քանակականն է կրկնուած, որ նշանակումէ մի քանակութեամբ առարկայ բաժանած մի քանի անձանց կամ մի քանի տեղ. Երեք երեք, մի մի, տասն տասն, հարիւր հարիւր: *պարտէզ*

Զարգացումն է դարձեալ քանակականն՝ ածանցուած էս: մասնկով, որ ցոյց է տալիս միանման առարկաների միջև մէկ քանակութիւն զատած. Երկեակ, երեակ, հնգեակ, տասնեակ, յիսնեակ, հարիւրեակ:

Անշնորհի նոյն քանակականն է սին կամ սին մասնկով ածանցուած, որ նշանակումէ իւր ցոյց տուած քանակութեան բոլորն էլ. Երկութեան, չորեքեան, տասնեքին, հնգեքին, յիսնեքեան (երկուան էլ, չորսն էլ, տասն էլ, հինգն էլ, յիսունն էլ):

63. Թուական անուանք առանձին հոլովումն չունին, այլ հոլովում են մեզ ծանօթ կանոնաւոր հոլովմանց վերայ:

Քանակական թուականները հասարակօրէն հոլովում են Ք. հոլովման վերայ: Քացառութիւն կազմում են.

Մէ, որ իբր է վերջացած միավանկ, հոլովումէ Ք. հոլովման վերայ:

Երէս կամ երէս՝ Ե. հոլովման վերայ, և անեզական է:

Եւն, ինն, ասն՝ իբրև ըն յանգ ունեցող, բացի Ք. հոլովմանից, կարող են հոլովուիլ նաև Զ. հոլովման 2 օրինակի վերայ. (ինն միայն յոգնակի թուում):

Հարիւր՝ սովորաբար հոլովումէ Ք. հոլովման վերայ:

Հարիւր՝ սովորաբար Զ. հոլովման 1 օրինակի վերայ:

Բիւր՝ Ե. հոլովման վերայ. նոյնպէս և Գ-ի և Զ-ի 1 օրինակի վերայ:

Երէս, չորս անեզական են:

Պատական թուականները բոլորն էլ հոլովում են Զ. հոլովման 1 օրինակի վերայ. միայն ասն և ինն հոլովումէ Ք. հոլովման վերայ, Պատականների պէս հոլովում են և զատականները:

Անձներականները հոլովում են այսպէս.

Յ ո գ ն ա կ ի

Ո-շ.	Տասնեքեան	— քին.
Սէ. և Տր.	Տասնեցուն	— ցունց.
Հոյց.	ՉՏասնեսեան	— սին.
Գրծ.	Տասնեքումբ	— քումբք.
Բոյց.	Ի Տասնեցուն	— ցունց.

(Այսպէս հոլովում են և ասն և ինն, Բոլորէսն բառերը):

64. Բաղադրեալ թուականները, թէ քանակական և թէ դասական, այսինքն այնպիսիք, որ կազմուած են մէկից աւելի թուանիշ բառերից (հարիւր երեսուն և վեց, հինգհարիւր վաւասուն և Ք), կը հոլովուին երկու կերպ. այն է՝ կամ միայն նոցա վերջին բաղադրիչը կը հոլովուի և կամ բոլոր բաղադրիչներն էլ զատ զատ: Այսպէս՝ Երկու հարիւր յիսուն և վեց, երկու հարիւր յիսուն և վեցի, երկու հարիւր յիսուն և վեցիւք. Հարիւր քսան և ութերորդ, Հարիւր քսան և ութերորդաւ. և կամ՝ Երկուց հարիւրոց յիսնից և վեցից, երկուք հարիւրովք յիսնիւք և վեցիւք. Հարիւրերորդ հարիւրերորդ քսաներորդ ութերորդ, Հարիւր երորդաւ հարիւրերորդաւ քսաներորդաւ ութերորդաւ և այլն:

65. Արովհետև թուական անուանք ածականի նշանակութիւն ունին, ուստի և գոյականների հետ վարում են ածականների նման՝ և՛ յետողաս և՛ նախաղաս:

Յետաղաս թուականները, քանակական թէ դասական, գոյականների հետ միասին կը հոլովուին. իսկ նախաղասները կարող են և՛ հոլովուիլ և՛ չհոլովուիլ:

Մէ, որպէս կարճ ածականները, նախաղաս ժամանակն էլ սովորաբար հոլովում է: Անձներականները թէ նախաղաս թէ յետաղաս պէտք է հոլովուին անշուշտ:

6-3.8. Երէս. *պարտէզ*

Գ Լ ՈՒ Ն Բ.

Գ Ե Ր Ա Ն ՈՒ Ն

66. Զատ անգամ խօսքի մէջ գոյական կամ ածական և կամ թուական անունները չկրկնելու համար՝ նոցա փոխարէն դրոււմ են այլ բառեր, որ կոչոււմ են Գ Ե Ր Ա Ն ՈՒ Ն:

67. Գերանունները բաժանուում են մի քանի տեսակի, որք են:

Ա. Ա ն ձ ն ա կ ա ն՝ Ես, դու, ինքն, իւր, նա, (սա, դա), իրեար, միմեանց:

Բ. Յ ու ը ց ա կ ա ն՝ Սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն:

Գ. Ս տ ա ց ա կ ա ն՝ Իմ, քո, քոյ, իւր, մեր, ձեր, սորա, դորա, նորա, սոցա, դոցա, նոցա, իմային, քոյին, իւրային, մերային, ձերային, սորային, դորային, նորային, սոցային, դոցային, իւրեանցային:

Ստացական գերանուններն են Անձնականներն սեռականները և կամ այս վերջններէց Է մասնկով ածանցուածները:

Գ. Յ ա Ր ա բ ե Ր ա կ ա ն՝ Ո կամ ով, որ, զի կամ զինչ և կամ ինչ:

Ե. Ո Ր ա կ ա ն՝ Որպիսի, այսպիսի, այդպիսի, այնպիսի, սոյնպիսի, դոյնպիսի, նոյնպիսի:

Զ. Ք ա ն ա կ ա կ ա ն՝ Որքան, որքանի, որչափ, այսչափ, այդչափ, այնչափ, այսքան, այդքան, այնքան, այսքանի, այդքանի, այնքանի, սոյնքան, դոյնքան, նոյնքան, սոյնչափ, դոյնչափ, նոյնչափ:

Է. Ա ն ո Ր ո շ՝ Ոմն, ոք, իմն, իք, ինչ, միւս. այլ:

Ը. Ո Ր ո շ ե ա լ՝ Անձնիւր, իւրաքանչիւր, երկաքանչիւր, ամեն, ամենայն, ամենեքեան, բոլորեքեան:

68. Վերոյիշեալ գերանուններէց միմիայն գոյականի մտաքով գործ են ածուում բոլոր անձնականները, ոչ յարաբերականը

և սա, որ, նա ցուցականները: Այս, այդ, այն, այն. որոյն, նոյն ցուցականները թէ՛ գոյական են թէ՛ ածական՝ ըստ գործածութեան: Իսկ մնացածներն ածական են և գոյականի մտքով այն ժամանակ են միայն վարուում, երբ գոյական չունենան մօտները:

69. Ածական գերանուններն, ածական անուանց նման, իրանց գոյականների հետ վարուում են և նախադաս և յետադաս: Նախադաս ժամանակը կարող են հօլովուիլ կամ չհօլովուիլ, իսկ յետադաս ժամանակն անշուշտ պիտի հօլովուին:

Որ, որոյն սովորաբար նախադաս են լինում, և որ սովորաբար հօլովուում է երբև կարճ ածական: Ոք, ոչ, իք, ինչ, գոյականներէց սովորաբար յետադաս են լինում և միշտ հօլովուում են:

70. Անձնական, ցուցական, յարաբերական, և անորոշ գերանունաւոր ունին իրանց յատուկ գերանուական հօլովումն, իսկ մնացածները հօլովուում են անուանց կանոնաւոր հօլովումներից մէկի կամ միւսի վերայ:

Ահաւասիկ օրինակներ.

71. Ե գ ա կ ի.

Ո-դ. Ես	Գու	Ինքն	Նա	(Չունի)
Սէ- իմ	Քո	Ինքեան	Նորա	Իւր
Տը. Ինձ	Քեզ	Ինքեան	Նմա	Իւր կամ Իւրեան
Հոյց. զիս	զՔեզ	զԻնքն	զՆա	(Չունի)
Գրծ. Ինչ	Քի	Ինքեամբ	Նովաւ	Իւրև
Բոյց. ինչն	իՔէն	յինքենէ	ի Նմանէ	յԻւրմէ

Յ ո գ ն ա կ ի

Ո-դ. Մեք	Գուք	Ինքեանք	Նոքա	Իւրեանք
Սէ- Մեր	Չեր	Ինքեանց	Նոցա	Իւրեանց
Տը. Մեզ	Չեզ	Ինքեանց	Նոցա	Իւրեանց

Հայ. զՄեզ զՁձեզ զԻնքեանս. զՆոսա. զԻւրեանս.  
 Գրծ. Մեօք Ձեօք Ինքեամբք. Նոքօք. Իւրեամբք.  
 (մեւք, (ձեւք)

Բայ. Ի Մէնջ Ի Ձէնջ Ինքեանց. Ի Նոցանէ. ԻԻւրեանց.

Նա գերանուան պէս Հոլովուումեն և սա, Կա:

Ինչն անձնականն և ի-ր անձնականի յոգնակին Հոլով-  
 ւումեն Ա. Հոլ. 2 օր. վերայ. այպէս և Ռեանց, Երեբայ, որ Հո-  
 լովուումեն միայն յոգնակի և ուղղական չունին:

72. Ե գ ա կ ի.

Ո-շ. Այս (Կարճ չե)	Այս (Երկայն չե)	Սոյն.
Սեւ. Այստ	Այստրիկ.	Սորին, սորուն
Տր. Այստ	Այսմիկ.	Սմին.
Հայ. զԱյս.	զԱյս.	զՍոյն.
Գրծ. Այսու.	Այսուիկ.	Սովին, սովիմբ.
Բայ. Վասմանէ.	Վասմանէ.	Ի Սմանէ (ի սմին):

Յ ո գ ն ա կ ի.

Ո-շ. Այս (ք)	Այստքիկ.	Ստքին.
Սեւ. Այսց.	Այսոցիկ-ցուն-ց.	Սոցին-ցուն-ցունց.
Տր. Այսց.	Այսոցիկ-ցուն-ց.	Սոցին-ցուն-ց.
Հայ. զԱյս.	զԱյսոսիկ.	զՍոսին.
Գրծ. Այստքիւք-քիմբք.	Այստքիւք-քիմբք.	Սովիմբք-ստքիմբք.
Բայ. Վասցանէ.	Վասցունց.	Ի Սոցուն-ց (ի սոցին):

Սոցա պէս Հոլովուումեն Այր, այն, Կայն, Կայն:

73. Ե գ ա կ ի.

Ո-շ. Ու, ո.	Ջինչ. (ինչ, զի).	Որ.
Սեւ. Ուր	էր.	Որոյ.
Տր. Ում.	Իմ, էրում.	Որում (որոյ).

Հայ. Ջով, զո.	Ջինչ.	Ջոր.
Գրծ. (Չունի).	Իւ.	Որով.
Բայ. Վումէ (յումմէ).	Առ իմէ.	Վորմէ.

Յ ո գ ն ա կ ի.

Ո-շ. Ուք	»	Ուք.
Սեւ. Ուց.	»	Ուրոց.
Տր. Ուց	»	Ուրոց.
Հայ. զՈւս.	»	զՈւրս.
Գրծ. (Չունի).	»	Որովք.
Բայ. Վուց	»	Վուրոց.

Որ յարաբերականը Հոլուումէ Կ. Հոլովման վերայ:  
 Այս յարաբերական գերանունները, մանաւանդ  
 շինչ, (շի, Կին) գործ են ածուած յաճախ Հարցականի  
 մտքով:

74. Ե գ ա կ ի.

Ո-շ. Ոմն.	Ոք.	Իմն.	Իք (ինչ).	Ոմանք.
Սեւ. Ուրումն.	Ուրուք.	(Իրիք)	Իրիք	Ոմանց.
Տր. Ումեմն.	Ումեք.	Իմեմն.	Իմիք.	Ոմանց.
Հայ. զՈմն.	զՈք.	Իմն.	Իք.	զՈմանս.
Գրծ. Ոմամբ.	(Ոմամբ)	(Իւիք).	Իւիք.	Ոմամբք.
Բայ. Վումեմնէ.	Վումեքէ.	Վիմեմնէ.	Վիմեքէ.	Վոմանց.

Այս անորոշներէց միմիայն առ ունի յոգնակի:

75. Չատ անգամ իբրև Հարցական, երբեմն և ոչ Հարցա-  
 կան, գործ են ածուած յարաբերական ու անորոշ գերանուն-  
 ներն ի միասին. այսպէս՝

Ե գ ա կ ի.

Ո-շ. Ո՞ք	Ջինչ ինչ	Ո՞ւք ոմանք.
Սեւ. Ո՞ր ուրուք	է՞ր երիք.	Ո՞ւց ոմանց.

Յ ո գ ն ա կ ի.

Տր.	Ո՛ւմ ումեք.	Ի՛մ իմիք.	Ո՞րց ոմանց.
Հայց.	ՂՈ՞ ոք.	Ջինչ ինչ.	զՈ՞րս ոմանս.
Իրժ.	Որո՞վ ոմամբ.	Ի՛ւ իւիք.	Որո՞վք ոմամբք.
Բայց.	յՈւմմէ ումեքէ.	Առ իմէ իմեքէ.	յՈ՞րց ոմանց.

**76.** Միւս դերանուններէց՝

Ա. Բոլոր ստացական գերանունները հոլովուում են Գ. հոլովման պէս. իմ, իմոյ, իմով, լիմմէ, իմոց, իմովք, քո, քոյոյ, քոյով, քոյք, քոյոց, քոյովք. նորա, նորայոյ, նորայով, նորայք, նորայոց. իւրայնով, ձերայնովք, իւրեանցայնոց, և այլն:

Ք. ստացականը հոլովուում է և կարճ ձևով.—Քո, քոյ, քում, ՚ի քումմէ, քով, քոյք, քոց, գքոյս, ՚ի քոց, քովք: Այս ձևը գործածական է միայն յետադաս:

Բ Բոլոր որակականները հոլուում են Ի. հոլովման պէս. Որպիսի, որպիսւոյ, որպիսեալ, որպիսիք, որպիսեաց, որպիսեօք և այլն:

Գ. Քանակականներէց՝ ի վերջացածները նոյնպէս կը հոլովուին Ի. հոլովման վերայ: Այսքանի, այսքանուոյ, այսքանեալ և այլն: Միայն Գ. թուում կը հոլովուի Գ. հոլովման վերայ ևս. Քանոյ, քանով: Մնացած քանակականներն առհասարակ հոլովուում են Գ. հոլովման վերայ. Այնչափ, այնչափիւ, այնչափից, այնչափիւք և այլն:

Դ. Միւս, այց, իւրաքանչիւր, երկաքանչիւր, անչիւր կամ անչիւր) հոլովուում են Գ. հոլովման պէս. Այլ, այլոյ, այլում, յայլնէ:

Անչիւր սովորաբար միայն նախդրել է հոլովուում:

Ե. Անն, աննայն կը հոլովուին Գ. հոլովման պէս. իսկ աննեքէն, բոլորեքէն, ինչպէս անձներական թուականները:

**77.** Այս, այր, այն ցուցականներն իրանց գոյականի հետ միասին հոլովուելիս՝ եթէ նախադաս են՝ կարճ ձևով են հոլովուում, իսկ եթէ յետադաս՝ երկայն ձևով. այս վերջին դէպքում գոյականի վերայ զըլումէ նոցա համապատասխան յօդը, իսկ նախդիրը կրկնուում է երկուքի վերայ ևս. այսպէս. Այրս

այս, առնս այսորիկ, արամբս այսուիկ. զինուորդ այդ, զինուորիդ այդմիկ, ՚ի զինուորէդ յայդմանէ. պարզեն այն, պարզեալացն այնոցիկ, զպարզեն զայնոսիկ:

**ԳԻՄՈՐՈՇ ՅՕԿԵՐ.**

**78.** Այսպէս կոչուում են «, ր, ն գրերն, որ կազմում են արմատն ու տարերքը է», րո, ինչն, սո, րո, նո, այս, այր, այն և իճ, Գ, իւր գերանուանց: Յիշեալ գրերը շատ անգամ զըլուում են բառերի վերջը նոյն գերանուանց նշանակութեամբ. ինչպէս. Եթէ Տէր, ասէ, էլից. (է): Ամենայն մարմինը լուսաւոր եղեցի. (Գ): Այլք զաղօթից կարծեցին ասացեալ ՚ի տեառնէն (այն): Ո՞վ է այլր (այր): Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար. (Իճ): Որ խօսիւն, ոչ գիտէ զինչ խօսի. (նո):

**Գ Լ Ո Ւ Ս Գ.**

**ԲԱՅ.**

**79.** Բանի մասանց երրորդ տեսակն է Բ ա յ ն, որ նշանակում է առարկայի գործողութիւնը—անիլը, կրելը կամ լիւնիլը:

**80.** Չորս Ս ե ո ի բայեր կան, ա. Այն բայերն, որ ցոյց են տալիս խօսքի մէջ գլխաւոր առարկայի գործողութիւնն երկրորդականի վերայ անցած՝ կոչուում են Ն ե ը գ ո ը ծ ա կ ա ն:

բ. Այն բայերն, որ ընդհակառակն ցոյց են տալիս գլխաւոր առարկայի կրած գործողութիւնն երկրորդականից՝ կոչուում են Կ ը ա լ ո ը ր ա կ ա ն:

գ. Այն բայերն, որ ցոյց են տալիս գլխաւոր առարկայի

ինքն ըստ ինքեան կատարած գործողութիւնը կամ նորա ինչ լինիլը՝ կոչուում են 2 է գ ո ք:

Ե՛, լե՛ն, է՛ր, և 4՛՛ չէ՞զոք բայերը քերականները կոչուում են նա և է ա կ ա ն:

Գ. Կան շատ բայեր միայն կրաւորականի ձևով վարուած, որոնք ըստ դիպաց և՛ կրաւորական են և՛ ներգործական. այս տեսակ բայերը սովորաբար կոչուում են չ ա ս ա ռ ա կ սեռի բայեր:

Շատ անգամ մի սեռի բայերը, խօսքի իմաստին համաձայն, գործ են ածուում մի ուրիշ սեռի նշանակութեամբ:

**81.** Բայերն իրանց սկզբնական ձևով չորս տեսակ վերջաւորութիւն ունին. ա՛յ, է՛յ, ի՛յ, ո՛ւ: Սոքա կոչուում են բայերի լծորդութիւն. (Գնալ, սիրել, ծնանիլ, թողուլ):

**82.** Բայերը բացի լծորդութիւնից ունին նաև Ե զ ա ն ա կ, ժ ա մ ա ն ա կ, Թ ի ւ և Գ է մ ք:

**83.** Եղանակները չորս են. Ա ն ո ղ ո շ, Ս ա հ մ ա ն ա կ ա ն, Հ ը ա մ ա յ ա կ ա ն և Ս տ ո ղ ա դ ա ս ա կ ա ն:

Զըջումն էլ երկու տեսակ կարող է լինել. Հարկաւոր և Ազատ: Հարկաւոր է այնպիսի շրջումն, որի մէջ բառերի սովորական շարագասութեան խոտորումն եղած է առ հարկի, որպէս զի խօսքի մէջ երկբայութիւն կամ իմաստի հոմութիւն չծագի: Օրինակ.

240. Հարկաւոր: Ա. խօսքի բնական շարագասութեամբ մակդիրը գոյականից յետոյ պիտի գրուի, որպէս նորա լրացու-

ցիւր. սակաջն հարկ կը լինի նախադաս անել, եթէ մակդիրն երկայն ու անհոլովելի է, և կամ եթէ յետադաս լինելով՝ խօսքի իմաստն երկբայելի կը լինի:

— Վասն իջանելոյ աստուածեղէն սուրբ հոգւոյն. (փոխանակ՝ հոգւոյն սրբոյ աստուածեղինի). Որ զբազմաստուածեան պաշտամունսն մուծին՝ վկայեն. (որ մուծին զպաշտամունսն բազմաստուածեանս):

— Դառն և սատակիչ կործանումն Հերովդի:

Եթէ ասէինք՝ Կործանումն դառն և սատակիչ Հերովդի՝ չէր որոշուել թէ՛ կործանումն է դառն և սատակիչ, թէ՛ Հերովդ:

Բ. Յատկացուցիչը հարկ է լինում նախադաս անել իւր յատկացեալից, երբ յատկացեալը յարաբերական ունի, որ պիտի դրուի իւր յարաբերեալից անմիջապէս յետոյ, և կամ երբ ինքը յատկացուցիչը յարաբերական դերանունն է, որ ըստ կանոնի նախադաս է լինում սովորաբար:

— Յովհաննու եղբայրն, որ սպանաւ սրով:

Եթէ ասէինք՝ Եղբայրն Յովհաննու որ սպանաւ սրով կարող էր հասկացուիլ, թէ սպանուողը Յովհաննէն է և ոչ Եղբայրը:

— Կինն, որոյ անուն պատմի ընդ ամենայն աշխարհ. (փոխանակ՝ անուն որոյ):

Գ. Ստորոգեալը փոխանակ անմիջապէս իւր ենթակային յաջորդելու՝ հեռանումէ նորանից, երբ ենթակային կցորդ կայ յարաբերական նախադասութիւն:

— Յակոբոս, զոր սպան Հերովդէս, կոչէր եղբայր Տեառն. Վէմն, զոր անարգեցին շինողքն, եղև գլուխ անկեան:

Դ. Հարցումն պարունակող նախադասութեանց մէջ հարցական բառն իրան հետ կցորդուած բառերով կը դրուի նախադասութեան սկիզբը:

— Որպիսի՞ ոք իցէ սա. Վասն որո՞յ գործոյ կամիք քարկոծ առնել զիս. Զի՞նչ գործ գործեալ է քո. Ո՞րք ՚ի ճշմարիտ արանց սորա յեշատակօքն ոչ գուարճասցի:

241. Առաջ.

— Ո՛չ ուստեք արբուցումն բաւական թագաւորականին գտանէր տեղոյ:

(Ոչ ուստեք արբուցումն գտանէր տեղոյն թագաւորականի).  
— Հրամայեաց զնա վաճառել տէրն նորա, և զկին նորա, և զորդիս նորա.

(Տէրն նորա հրամայեաց վաճառել զնա և զկին նորա և զորդիս նորա):

— Եւ զայս ոչ վասն այնր օգտի, որ զապտակն առնուցուայ վասն օգտի այնր, որ հարկանիցէն՝ ճառէ.

(Եւ ճառէ զայս ոչ վասն օգտի այնր, որ առնուցու զապտակն, այլ վասն օգտի այնր, որ հարկանիցէ):

— Ո՛չ գօսանալ ձեռաց կոփողացն հրամայեցեր օրհնեալ գագաթանդ:

(Ո՛չ հրամայեցեր գօսանալ ձեռաց կոփողաց գագաթանդ օրհնելոյ):

— Մէ ոք ինքնակաց զաշխարհս իշխեսցէ համարել.

(Մէ ոք իշխեսցէ համարել զաշխարհս ինքնակաց):

— Զիմա՛հ գլորմանն ցուցից կերպարան.

(Յուցից զկերպարան գլորմանն ՚ի մահ).

— Կամք հօրն իւրոյ զի կատարեսցին ՚ի նմա՝ կամէր նա.

(Նա կամէր, զի կատարեսցին ՚ի նմա կամք հօրն իւրոյ):

— Վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն.

(Վասն քինու միոյ ոչ է օրէն դիւցազանց բառնալ զկենդանութիւն զարմից այլոց դիւցազանց):

— Մարդոյ կերպարանօք, զոր ըստ իւրում պատկերին արար, յայտնէր. Մերթ կոչի առ ՚իսպասն, յոր կարգեցաւ հասանելոյ. Բայց աղէ՛ դու զկարին իսկ զօք շապուեալ ցանկութեամբ՝ պրկեա և մտրակեա. Գիտէին իսկ ոչ զնա, թէ է որդի. Բայց և տէր արարածոց զարդարն միայն զիմրդ կոչեցին. Եւ փառաւորեսցուք ընդ ամենայնի, զոր առնէ և արկանէ մեզ ՚ի կիր զշահօն՝ Աստուած. Զիմրդ չիցէ յետին անմտութեան, ուր կորնչին և ապականին համբարքն՝ համբարել. Զնորա և ոչ զանուն անգամ գիտեն բազումք.

242. Իբր յոյժ վայելուչ Ղրջու մն՝ ընտիր մատենագիրները միմեանց հետ կցորդուած բառերը յաճախ հեռացնումեն իրարից միջանկեալներով, ինչպէս օրինակ Ք՝ կամ Բ՝ մակբայով բայերը, երկու բառերից բաղադրուած բայերը կամ





պարտի գոյցս շարժանց պարզել. Մի տար ղեկեղեցի քո յայսն անհարձ  
կանայ:

Երբեմն այսպիսի նոյնանիշ գոյականներն դուռումն և մի և նոյն հոլովով. — Նա և դողումն և ունի գարաթան: — Այսպէս է միշտ աշխարհաբարի մէջ: — Ուշքն ու ծիւղ գործին տուաւ. Յանն ու Վերջ պատել է սիրտը. Տանկց քեշից հեռու ընկած. Կեանքն ու սրբն Ստուած պահէ. Գրող ու ճակտողէ նորան:

**249.** Գարձեալ նոյն ձևով երկու հոմանիշ բայեր գործ են ածուծ իրար հետ, մինն անցեալ դերբնայ և Աւելադրութիւն:

— Չայն իբրև լուսա թագաւորն յով. ցնծալով բերկրեցաւ. Անդադար յորդորելով զամենեսեան ճեղեղ փութացուցանէր. Եղծեալ ապականէին ամենայն խեղաթիւր կամք նորա. Աճեղեղ բազմասցին ազգք Հայոց. Գունդն Հայոց ոչինչ լուսացաւ լքան ՚ի քաջութենէն. Ընդէր դուք ընդ նոսա արեալ տոգորելիք: Մարտ երեալ կուռէք ընդ նոսա:

Երբեմն այս երկու հոմանիշ բայերն էլ դիմաւոր են լինում. — Կարճեսցին և սրբելցին օրէնք սուրբ ամուսնութեան. Երկեաւ արքայ և կոնֆլիկտայ և ոչ կարաց տալ հրաման. Չանօրէն իշխանն խաբեցաք պարբեցաք իբրև զմանուկ մի տղայ անպիտան. Հեղոյր արեալք առաջն նոցա զպարզևս երկրաւորս. Կացցուք քաղցր ՚ի պատշաճ մեխառուութեանն. — Այսպէս է միշտ և աշխարհաբարի մէջ: —

**250.** Աւելադրութիւն է և գործ է ածուծ խօսքին ազդուութիւն տալու համար մի և նոյն բառի կրկնութիւնը նախադասութեան մէջ՝ երբեմն միմեանց մօտ, երբեմն իրարից բաժանուած:

— Ես եմ, ես էմ, ես նոյն էմ ՚ի սկզբանէ մինչև յաւիտեան. Մի տեարք եմ պատուականք, մի՛ չեստ այսչափ ՚ի բարձունս վերանալոյ՝ այսքէն յերկիր անկեալ թաւալիցիմք. Ողորմիմ, արդիմ սիրելեաց ձեռոց, և բազում անգամ արդիմ անձանց ձեռոց. Ձեք և չիս ինչ զուրուք զկեանս առանց տրտմութեան գտանել:

Գ.

— արժմա յ՛ մեծցցմ իստակս միմիկ յամբողջ յայնչիլոցմ. Գ յամբողջացմ ըմտումն փութոյր ծառնոս զաշայն նալ մար

**Բ Ա Վ Ա Ռ Ո Ւ Ի Ի Ն**

**251.** Բակառութիւն է կոչում բերականական ձևը, երբ նախադասութեան մասունքը համաձայնումն ոչ ըստ բերականական կանոնաց, այլ ըստ իմաստին:

**252.** Բակառութեան ձևն էլ մատենագրութեանց մէջ գործ է ածուած այլ և այլ կերպ: Մանրամասնութիւններն, ինչպէս և այլ ձևերինը, շատ կարգալով և մտադիր լինելով կարելի է ըմբռնել: Սակայն քանի մի սովորական դէպքեր կարելի է ցոյց տալ: Երբ խոսակցի մեծապատասխանութեան համար Ս. Չատուանգամ եղակի ենթակային, որի մօտ գօրութեամբ որ և է լրացուցիչ բառ է հասկացում, տրուում է յոգնակի ստորոգեալ:

— Չոր աղի և անուշ զամանս ջրուորացն ընդ. Այժմ երկրաւոր նշանաց պէտք են, և երբնորն այլում ժամանակի պահելու. Պագըրտեղոցն ընդ ցանկալի պեղծ թատերան քեռուելու. Առեւ չգօրաց նորեցուն:

**Բ.** Եղակի ենթակայի էական բայը յաճախ զընում է յոգնակի, երբ այս վերջինս ունի յոգնակի ստորոգելի:

— Ոչ եթէ վաճառացն տուրեաւելիք կամ այլոց շահից ինչ հայթայթանք եղն քորն. Մտաց բարբաջանք էս ողանդ. Մտացօնք եղն հմա քալաւոր Որդւոյն Ստաուծոյ. Այլք՝ Ինտորութեան մարդոյ էս. ՉԱտուածոյ օրէնսն թշնամանես, և այն իսկ չեցեն շատ պատիժք:

**Գ.** Եղակի հաւաքական կամ բազմաբար առնուած առնուանց վերայ դրուած է շատ անգամ յոգնակի մակիրը, կամ բայ, կամ դերանուն:

— Ընթացաւ ամենայն ժողովուրդն զարմայեալ. Առք սկայիցն ունեւորիս, յալ լուսնորմ մարմնով և վիճիտրիս. Անմահ հաստատեաց զբնութեան չորից նիւթոց. Նման են ճանչորոց, որ նորիցն ՚ի հրապարակս. Արձակեաց զժողովուրդն ՚ի խորանս իւրեանց. ՚ի բառեալ ազգին Արշակունեաց՝ քերեցին աշխարհին Հայոց արքն Սասանայ պարսկի. Առաւել քան զարտագեան քերն ածէ ՚ի Հայս, ընդ որ և զՉարդմանոս ա-

նուն թագաւոր նոցին. Երբորսն այս քէքս և որորդեալ 'ի նա յարեալ էին. Ահեայն 'ի ժամանակի իւրեանց խորրեցին:

Գ. Վերոյիշեալ կանոնին հակառակ՝ երբեմն էլ անեզական կամ միաբար առնուած յոգնակի անուանց վերաբերեալ բառերն դրոււմեն եզակի թուով:

— Որ սխալ շեշտէ գնոսա. Անտի ծանի ամենայն գեղեցիկութիւն. Թերևս ահագին են ձեզ Բան Լուսիցի. Պարզեալ Բարեկեան քան զբանս և զամենայն միտս անցանէ: Եւ կենացն փայլեցաւ. Կեանք իմ 'ի դժոխս Երջեցաւ:

**253.** Վերը բերուած օրինակները մէջ նախադասութեան մասանց արտաքին անհամաձայնութիւնը դարձեալ մէկ ներքին, այսինքն ըստ իմաստից, համաձայնութիւն ունէր. բայց շատ անգամ պատահումեն Բակառութեան ձևեր, որ յայտնի խոտորումն են Համաձայնութեան Հիմնաւոր կանոններից և զրջի կամ լեզուի սանձարձակ ազատութեամբ ու շարժունութեամբ միայն կարող էին գործադրուիլ, ինչպէս կ'երևի հետեւեալ մի քանի օրինակների մէջ. —

— Բան, զոր ցուցցէ ինձ, պատմեցից բեզ. (Ձեան պատմեցից). Իսկ եղբորս, որում հանդիպեցաւ փառաւորութիւն աւուրն, սքողեն սպիտակ սքողիւք. (Եղբորս սքողեն). Վասն որ յառաջ քան զխաչելութիւնն շարժարան պատահելոց էին (վասն շարժարան, որ պատահելոց էին). Ձեան որ գերկինս արարին՝ տարածեցեր 'ի խաչին. (Էջեան). 'Ի Բարեկեան, ուստի անկեալն էին, զմտաւ ամէն (Էջարան). Ձեան, զոր անարգեցին շինողքն, նա եղև գուրև անկեան. (Էջեան եղև). Յամենայն քէքս, յորս հասանիցեն. գնացք օտից ձեռոց, ձեզ տաց զնոսա. (զամենայն օտից ձեզ տաց). Ձիք ազգ, որ ոչ իցեն իրաւունք 'ի դատաւորաց. (որոչ ոչ իցեն). Գլխացաւ 'ի նոսալն, որ ոչ երբէք պակասեցաւ գութ ևորս. (որոչ ոչ երբէք պակասեցաւ գութն). Օրհնեցէք զձէր ընդ երջանայնսն նմանեալ դասուց. (երջանայնսն նմանեալ դասուց). Իբրև Որբոյ մարդոյ գայ ընդ ամսս. (Իբրև Որբէ մարդոյ). Իբրև օր՝ զթոյնս 'ի բաց եղեալ՝ դեսպանս առ իշխանն Ատոմ առաքէր. (Իբրև օր):



### ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

## ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

### ՆԱԽԱՇԱԽԻՂ

**254.** Ուղղագրութիւնը քերականութեան այն մասն է, որ ուսուցանումէ բառերն ուղիղ գրել իրանց կազմութեան համաձայն, և Կարձեալ՝ անսխալ և ըստ պատշաճին գործածել քերականութեան մէջ սահմանուած առանձին նշանները խօսքի ներքին բովանդակութեան և բառերի շարադասութեան համաձայն:

Մէկ շարագրութեան մէջ եթէ ուղղագրութեան կանոններն անփոյթ առնուին՝ խօսքը բացայայտ չի լինիլ, և մինչև իսկ իմաստի աղաւաղումն կրցառաջանայ:

**255.** Ուղղագրութեան կանոնները կարելի է երեք զլիւ բաժանել.

- Ա. Տ ա ու ե ռ ի ու զ զ ա գ ը ու թ իւ ն.
- Բ. Ա ո ո գ ա ն ա կ ա ն ն շ ա ն ն ե ռ ի ու զ զ ա գ ը ու թ իւ ն. և
- Գ. Տ ը ո հ ա կ ա ն ն շ ա ն ն ե ռ ի ու զ զ ա գ ը ու թ իւ ն.

### Գ Լ ՈՒ Մ Ա

## ՏԱՌԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

**256.** Տառերի ուղղագրութեան կանոնների մեծագոյն մասը պէտք է սովորել քերականութեան ընթացքի մէջ, ուշ դարձնելով բառերի հոլովմանց, խոնարհմանց, բարդութեանց



բառերի մէջ և վերջը՝ միայն ո գրից յետոյ. միւս դէպքերում եթէ չ լսուի՝ կը գրուի — կամ —, նայելով թէ ըստ կազմութեան բառին որն է հարկաւոր: Աահան, վարդ, ծով, հովիւ, երկեաւ, նաւ, դէ, անուան:

Բառի մէջը կարող է պատահիլ բարդութեանց կամ ածանցմանց մէջ, երբ չ գրով սկսուող բառը վերջն է: Կանաչար, գորաչար, անշանելի, անշտահ, քաջաչարժ:

268. Մ տառը ք, ր, փ շրթնային տառերից առաջ յաճախ դառնում է արտաբերութեան համաձայն: Աճիճ, աճալ, անուաճ, ուսմաճ (ան-բիճ, ան-բաւ, անուան-բ, ուսման-բ) աճող, աճողի աճողարիշտ:

269. Ռ տառը ն-ից առաջ սովորաբար փոխում է ո, որ յետոյ կրկին ր է դառնում, երբ ն մօտից հեռանում է: Պուռն, դրան, ամառն, ամառանոց, ամառնային. առնեմ, արար, լեռն, լերինք, ՚ի լեռնէ. այր, առն, յառնէ, արանց. տէր, (տի-այր) տեառն. դարձ, դառնալ. բարձ, բառնալ. յարիր, յառնել, սրունք, սռնապան. ջերմ, ջերանիմ, ջեռնում:

270. Ր և ո տառերով հայերէն մի քանի բառ կայ միայն. (\*) մնացեալներն, որ նոյնպէս շատ սակաւաթիւ են օտարազգի բառեր են: Իսկ հայերէն բառի սկզբում կը գրուի հր, եթէ բառը բուն հայերէն է կամ բոլորովին հայացուցած, և հո, թէ որ օտար բառ է: — Հրիտակ, հրովարտակ, հրաժեշտ, հրահանգ, հրաշք, հրապարակ, հրաւեր. Հոովմ, հոետոր, Հուաւեննա: (Բացառութիւն է հոչակ, հոիկ, հրեայ):

271. Ուշադրութեան արժանի է, որ երբ բառի մէջ միմեանց մօտ լինին լծորդ բաղաձայններ՝ գրեթէ միշտ այսպէս

(\*) Ոամ, ումոն, ոիմ, ուշտ, ուումբ, ոոււզն, ոռն, կամ ոռշն: Բոսին, բոսել: (Թեքեւ ապաղայում այս սակաւաթիւ բառերի էլ հայերէն լինելու կամ արմատական բառ լինելու մասին տարակոյս ծագել, ինչպէս որ բողէ, ոռճիկ, և այլն չեն հայերէն, և բոճ, բոխ, բոպ, բեռնիմ բառերի խնկահանն է՝ երոճ, ուրբի, որոպ, որ—հոման):

են պատահում — նորք տառերը միմեանց մօտ կամ լեռ-երի մօտ, լեռ տառերը միմեանց մօտ կամ նորք-երի մօտ, իսկ Ռիշանէրը միայն իրար մօտ և ոչ նորք կամ լեռ տառերի:

Ն ու ը բ են. պ, կ, տ, ճ, ծ, ս, հ, ղ (փափուկ):

Մ ի ջ ա կ՝ բ, գ, դ, ջ, ձ, ժ, զ, ղ:

Թ աւն փ, ք, թ, չ, ց, ջ, շ, ջի:

Ահաւասիկ մի քանի օրինակներ.

— Ապտակ, աստ, Աստուած, սասար, ախտ, ոսկի, խի, բախտ, բաղդ, ուխտ, ոսպն, պաշտպան, պաստառ, պատկեր, պատկառ, պաշտօն, հագուստ, փախուստ, պահեստ, զգեստ, հրաժեշտ, պատուաստ, լապտեր, լաստ, լիտի, պատճառ, կշտամբել, կտակ, սաստ, սթափ, հսկայ, սկիհ, շտապ, շպար, շփոթ, պանդուխտ, հտակտ, ճիշտ, յափշտակել, վաշտ, վաշխ, տախտ, փշոտ, օցտիլ, աքցան, աքսոր, Երասխ, Ալէքսանդր, Քսերքսէս, դաշտ, դաստ, բաստ, թթու, երաժիշտ, կոշտ, Հայաստան, կսկիճ, Տրսա, Սկիւթ, Կոտանդ, Ափշադար, Աշխադար, Աշխէն, Սանդուխտ: Ազդ, ազգ, ազդը, արբա, աղբււր, աղջիկ, ողբ, Տիգրոն, Աբգար, Աբդիաս, հեղձ, գդակ, սկիզբն, մաղձ, շեղձ, Աբտաւազդ, Հրագդան, Մագդեզն, դժգոհ, դժոխք, եղջեր, Երագգաւորս, Կոզր, կուզր, հեղգ, քաղդէացի, Որմիզդ, Աղտ, գաղթ, դաղտնի, պաղպաղ, մաղթեկ, Մեղտի, տղալ, աղբատ, գեղ՛, խեղճ, եղ՛ծ, կոճղ՛, Գողթն, քաղ՛ոց, Աղ՛ցբ:

Այս օրինակներից կ'երևի, որ վերը բերուած կանոնը բաւականին հիմնաւոր կանոն է լիշեալ բաղաձայնների ուղղագրութեան վերաբերմամբ, և բացառութիւնք դուրս ուրեք միայն կը գտնուին:

Գ Լ ՈՒ Ն Բ.

ԱՌՈԳԱՆՈՒԹԻԻՄ

272. Ա ո գ ա ն ու թ իւ ն կոչումն բառերն ուղիղ արտաբերելու, ձայնաւոր տառերն բարձր կամ ցածր, երկայն կամ կարճ հնչելու կանոնը:

Առողանութեան ճշտութեան համար քերականութեան մէջ սահմանուած են զանազան Առողանական նշաններ, որք են. Բ ու թ ( ), Ղ ե շ տ ( ), Երկար ( ), Պարոյկ ( ):

273. Բ ու թ ը ցոյց է տալիս, թէ բառի մէջ այն կամ այն վանկը չէ բարձրանում կամ Կերկայնանում, այլ բռութ է հնչում. օրինակ՝ հետեւեալ նախադասութեան մէջ — Ո՛չ գիտեմ դձեգ — միայն ոչ բառը բարձր է հնչում, իսկ գիտեմ, ոչ ոչ ցածր, այսինքն բռութ:

Բ թ անշանն այժմ ամենեւին չէ զբուծ գրութեան մէջ իբրև առողանական նշան, այլ գործ է ածուծ տրոհութեան մէջ, ինչպէս կը տեսնենք վետոյ:

274. Ղ ե շ տ ր ցոյց է տալիս թէ վանկը բարձր ու սուր ձայնով պիտի հնչուի:

275. Չեշտեայ բառերն երեք տեսակ են, Ղ ե շ տ ո լ ո ը, Յ ար ա շ ե շ տ և Ն ա խ ա յ ա ը ա շ ե շ տ:

Ղ ե շ տ ո լ ո ը բառերը նոքա են, որոնց շեշտը վերջին վանկի վերայ է: — Եկայք, լսարուք, ածէք:

Յ ար ա շ ե շ տ ն ե ը նոքա են, որոնց շեշտը վերջնութեմ վանկի վերայ է: — Այսչափ, սոյնպէս, յայնժամ, բարէ, որդեակ:

Ն ա խ ա յ ա ը ա շ ե շ տ նոքա են, որոնց վանկը վերջից երրորդ վանկի վերայ է: — Ահաւասիկ, մանաւանդ, հինգերորդ, նոյնժամայն, նմանապէս, ովսանա:

276. Բառերի շեշտ երկու կերպ կարող է լինել — Ք ե բ ր ա կ ա ն ա կ ա ն և Տ ր ա մ ա բ ա ն ա կ ա ն:

Ք ե բ ա կ ա ն ա կ ա ն շեշտն այն է, որ բնական է որ և է բառի ինքնին արտաբերուելու ժամանակ ևս, ինչպէս վերը չիշուած բառերը: Իսկ Տ ր ա մ ա բ ա ն ա կ ա ն շեշտն այն է, որ ընդունուծէ բառը խօսքի մէջ իւր ունեցած դիրքին համաձայն, այսինքն երբ այլ բառը խօսքի ընթացքում ներգործութեամբ կամ մտաւորապէս առաջարկուած հարցի պատասխան

է, կամ այն, որի վերայ ցանկանում ենք աւելի հրաւիրել լսողի մտադրութիւնը: Օրինակի համար:

— Դ՛ն տուք դոցա ուտել. Զ՞ն խնդրէք, գ՞ն խոստ. Է՛ն եմ. Ի՛նչ պետոյ է ՚ի քէն մկտտել. Անստուգութիւնն և եթ պատճառ չարեաց իմանալի է. Հոգի՛ն կոչէ պնոսա վասն արագութեանն:

277. Թէ քերականական թէ տրամաբանական շեշտն ըստ պատշաճին պէտք է առողանուին ընթերցման ժամանակ. բայց գրութեանց մէջ շեշտ զբուծուծ արդեամբ հետեւեալ դէպքերում.

Ա. Բայերի հրամայական եղանակի վերայ: — Կաց առ մեզ. Ել աստի. Մի խօսիր զանիրաւութիւն. Լերուք արք. Փրկեան զմեզ ՚ի չարէ:

Բ. Կոչական բառերի վերայ: — Հայր մեր, որ յերկինս. Այս ինչ յայտնի լիցի քեզ, արքայ. Որդեակ, մի երթար ճանապարհ ընդ նոսա:

Եթէ հրամայական և կոչական բառերը բաղադրեալ են կամ կրկնուած և կամ յաջորդուծ են տրամաբանօրէն շեշտելի բառերի, այն ժամանակ նոցա շեշտը կ'առնուն նախընթաց բառերը. — Դ՛ն լեջեր նոցա օգնական. ԶԿոչ՛ լերուք ողորմութեան ձերում. Արև՛ն կացէք. Աստուծ իմ Աստուած, ընդէ՛ր թողեր զիս. Տէ՛ր իմ Տէ՛ր, տուէ՛չ պարգևաց. Գն՛ջ արքայ. Ո՛վ անմիտ վաճառական:

Գ. Կէս-հարցական բառերի վերայ: — Ո՛չ գիտէք ղե՛նչ խնդրէք. Գիտեմք ո՞վ ես դու. Փութացաւ ուսանել, թէ քանի՞ իցեն պարագլուխք քաջ նահատակացն, և ո՞ր ոք ՚ի նոցանէ սաղարք լինիցին, և ո՞ր զօրագլուխ յարձ կողմանէ յուսում մտանիցէ, և ղե՛նչ անուանք իւրաքանչիւր համհարգացն իցեն, և քանի՞ փողահարք ՚ի մէջ գնդին ձայնիցեն:

Դ. Այն ձայնարկութեանց վերայ, որ հօգուոյ մեծ յուզմամբ չեն արտասանուծ: — Օ՛ն արիք գնասցուք աստի. Հնպա առաքինիք. Ո՛վ սքանչելեացս. Երանի՛ է ձեզ:

278. Երկար նշանը զբուծուծէ այնպիսի ձայնարկու-

Թեանց կամ այլ մասանց—բանի վերայ, որ հոգեկան մեծ յուզմամբ են արտասանուում, արտայայտելով զարմանք, կամ սքանչացումն, կամ վիշտ, կամ զգուանք և այլն.—Տէր Տէր, շէ սքանչելի է անուն քո. Ուէ՞՞՞ գրեց Հայոց աշխարհ. Ո՛ւ կատարեալ միտք և բարք. Վա՛հ որ քակէիր գտածարն:

279. Պարոյկ կամ Ուորակ կոչուումէ Հարցական նշանը, որ դրուումէ ամեն մի Հարցական բառի վերայ:—Գո՞ես Քրիստոսն, եթէ այլում ակնկալցուք. Ո՞ր ՚ի վեր իցէ, Կո՞րքն, որ անասնոյն տիրէ, թէ անասունն, որ մարդոյն ՚ի Հարկի կայ. Ո՞ւր են ժառանգորդք երկնից:

Բացի առողջանութեան այս գլխաւոր նշաններէց՝ Հին գրուածոց մէջ գործ էին ածուում երկու ուրիշ նշան ևս—Ս ու Ղ (°) և Թ (˘): Առաջինը դրուումէր գլխաւորապէս ա՝ գրի վերայ, երբ նա պիտի կարճ հնչուէր իբրև ա՝ իսկ երկրորդը՝ ա՝ գրի վերայ, երբ սա պիտի հնչուէր իբրև զ:—Սակայն այժմ այս նշաններն աւելորդ են Համարուած և իրաւամբ դուրս ձգուած առողջանական նշաններէ թուից:

Գ Լ Ո Ւ Խ Գ.

Տ Ր Ո Հ Ո Ւ Թ Ի Ի Ն

280. Տրոհուած թիւն կոչուումէ՝ գրուածքի մէջ բառերը կամ նախադասութիւններն իմաստին Համաձայն միմեանցից բաժանելը:

Պատշաճաւոր տրոհութեան Համար սահմանուած են Հետեւեալ նշանները. Ե ն թ ա մ ն ա յ (-), Ա պ ա թ ա ր ց ('), Մ ա կ ա կ է տ ('), Բ ու թ ('), Ս տ ո ր ա կ է տ (,), Մ ի ջ ա կ է տ (.), Վ ե ր ջ ա կ է տ (:), Չ ա կ ե ր տ („—“), Փ ա կ ա գ ի ծ (.), Կ ա ի մ ա ն - կ է տ ե ր (...), Մ ի ու թ ե ա ն գ ի ծ (-) և Ա ն ջ ա տ մ ա ն գ ի ծ (—):

281. Ե ն թ ա մ ն ա յ նշանը գործ է դրուում տողադարձի ժամանակ, այսինքն երբ տողի ծայրը Հասած մէկ բառի կէտը Հարկաւոր է լինում դարձնել միւս տողը:

Տողադարձի ընդհանուր օրէնքն այն է, որ բառը Հեգելու պէս էլ բաժանուի. օրինակ, Ար-քա-յա-կան, ի-մաս-տուն, ըն-տիր: Այս Հիման վերայ—

Ա. Միավանկ բառերը միջից չեն բաժանուիլ:—Սէր, լոյս, կեանք, սուրբ:

Բ. Բազմավանկ բառերի մէջ՝ եթէ իրար մօտ երկու ձայնաւոր լինին, մէկը կը մնայ տողի վերջը, միւսը կը դառնայ:—Ի-ակ, տի-եգերք, խօսէ-ի, առնու-ի:

Գ. Ա-, Է-, Ի- երկբարբառների մէջ, երբ ա՝ Հնչուի իբրև Չ կարող է բաժանուիլ ձայնաւորից առաջ:—Երե-ւի, թագաւոր, դի-ւի, դա-ւազան, պարգե-ւել:

Դ. Եթէ ա՝ երկբարբառին յաջորդէ մի ձայնաւոր, որի առաջ նա պիտի Հնչուի որպէս Վ, անբաժան կը մնայ այդ ձայնաւորից:—Ա-նուան, ազ-նուի, պա-տուոյ, Աս-տուած, նուէր, յայ-գուէ, սուին:

Երբեմն էլ, եթէ Հարկ լինի անշուշտ բաժանել, այսպէս կը բաժանուի. Անձնը-ւէր, ազնը-ւի, տը-ւաւ:

Ե. Մի բաղաձայնը բառի մէջ միշտ կ'անցնէ Հետեւեալ տողը:—Տու-րու-րե-րան, գա-ռա-գիղ, դա-տա-ւոր, քա-Հա-նայ, ա-նուա-նի, բա-ցա-յայտ, նո-րա-ծին:

Զ. Երկու բաղաձայններից մէկը կը թողնուի, միւսը կը դարձնուի. իսկ եթէ երկուսն էլ բաժանելի մասին են պատկանում ըստ կազմութեան բառին՝ երկուսն էլ կը դարձնուին:—Գոր-ծակալ, տարապար-Հակ, ոս-տիկան, Համա-ղղեստ, մեծա-շնորհ, նորա-նշան, ենթա-մնայ, ինքնա-ստեղծ:

Է. Զատ բաղաձայններից միայն մէկը կ'անցնէ Հետեւեալ տողը. իսկ եթէ վերջին երկու կամ աւելի բաղաձայնները բնական են բաժանելի մասին՝ կը դարձնուին:—Երկ-նային, ինք-

նակալ, մարդ-կօրէն, աստ-ղաբաշխ, հարս-նախօս, ան-տրտում, ան-մտութիւն, ան-բնական:

Ը. Եթէ բաղաձայնների մօտ լսվումէ ը ձայնը՝ տողա- դարձի ժամանակ պէտք է զրուի: — Գրթ-գոհ, կտրը-չի, եր- կրրպագու, մըշ-տնջենաւոր, ըս-կիզըն, ըշ-տեմարան, ըղ-տէր, տեառ-նրն:

282. Ա պ ա թ ա յ ւ յ նշանը բառերի վերայ զրուումէ այն- տեղ, ուր մի տառ, մանաւանդ ձայնաւոր, զեղչումէ, ինչպէս որ պատահումէ չափածոյ զրուածներին մէջ: — Ունդգիմանայր (ընդգիմանայր). Ի մարմին Գ եկեղեցւոյ քում մարտնչին (ընդ եկեղեցւոյ). Մտ-ողորմութեան որ ոչ թուին (չստ ողորմու- թեան). Զի րբզում ժամանակաց (զի ՚ի բազում). ԱՌաքէլ ապաւինիմ (աՌաքէլ). Նա՛ւանիկ, ապ՛եթէ, ար՛եկ, թ՛օձն պարտեցաւ. (Նա «ւանիկ, ապ՛ եթէ, ար՛ եկ, թ՛օձն):

283. Մակակէտը զրուումէ միայն Ի նախդրի վերայ: Կայ գործադրած նաև ղ, յ, յ, նախդիրների վերայ, բայց այս սո- վորական չէ: — Ի տանէ, Ի քաղաքաց, Ի թագաւորութիւն: (յօղ, յանցս, յանցաւոր, յուլ, զօրն):

284. Բ ու թ ը զրուումէ — Ա. Անկատար նախադասու- թեան վերջն, ուր ձայնը փոքր ինչ կանդ է առնում. այլ և այնպիսի բառերից յետոյ, որոնք եթէ ըթանշանով չանջա- տուէին հետևեալ բառերից՝ մտքի խառնակութիւն կը յառա- ջանար:

— Յարուցեալ Պետրոս ՚իմէջ եղբարցն՝ ասէ. Մինչ տղայն էի՝ եբրե գողայ խօսէի. Փոզս հարաք ձեզ՝ և ոչ կաքաւեցէք, ողբա- ցաք ձեզ՝ և ոչ կօծեցարուք: — Մահ՛ մարդոյ հանգիստ է. բանն քարոզաց՝ ուսկան է. (և ոչ Մահ՛ մարդոյ հանգիստ է. Բանն՝ քա- րոզաց ուսկան է). Զիմըզ պաշտեցեմ . . . զօր, որ մերթ գօչէ վա- րագացեալ՝ հրամանաւ, և մերթ սարսէ ՚իգօչելոյն՝ սաստիւ:

Բ. Բութ կը զրուի նաև նախադասութեան մէջ զօրու- թեամբ թողնուած բառի տեղը:

— Մարմին նմա գամենայն ինչ որ է՝ եղին, և աչ՝ զլուսա- ւորան. Սէր ոչ երբէք անկանի. եթէ մարգարէութիւնք են՝ խա-

փանեացին, եթէ լեզուք՝ լուսեցեն, եթէ գիտութիւն՝ խափանեցի. Յարդ ես ՚իբէն խնդրէի, իսկ արդ՝ յԱստուծոյ:

285. Ս տ ո Ր ա կ է տ ը զրուում է —

Ա. Երկու կամ աւելի նախադասութեանց մէջ, որոնք բո- վանդակութեամբ կախումն ունին իրարից կամ ամբողջացնումեն միմեանց:

— Ի բնց գնացէք, զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ, այլ ննջէ. Տեսեալ գժողովուրդսն՝ գթացաւ ՚ինոսա, զի էին աշխատեալք և ցրուեալք իբրև գոչխարս, որոց ոչ եցէ հօվիւ. Եթէ շինուածոց ի- ցեմք ցանկացեալք, ունիմք շինուածս յերկինս, որ ոչ երևին ձեր արքունիքդ առ նոքօք:

Բ. Նախադասութեան նոյնատեսակ անդամներն, այսինքն նոյն ենթակայի ստորոգեալները, կամ նոյն ստորոգեալի են- թականները, կամ նոյն հօլովով ինդիրները, կամ նոյն անուան միատեսակ մակդիրները կամ յատկացուցիչներն և այլն — մի- մեանցից կը բաժանուին ստորակէտով:

— Երկեղ արաաքնոց, արհաւիթք ՚իներքնոց անդադար ՚իվե- րայ հասանեն. Պատասխանի ետուն Սեղբաք, Միսաք և Աբեդնա- գով և ասեն. Յաւուրսն Ղովտայ ուտէին, ըմպէին, գնէին, վաճա- ուէին, տնկէին, շինէին. Եւ առնուին զանմատոց ամուրսն՝ գ Գառնի քաղաքն, զԱնին, զԱրտազերս և գաւանս իւրեանց. Տէր Աստուած գթութեան, փրկութեան և ողորմութեան. . . յիշեան զիս յորժամ գայցես արքայութեամբ քո՝ ահաւոր, հզօր, բարերար և ամենա- ստեղծ. Ափշիմ, թէ որպէս չյափշտակիմ տանջեալ, լքեալ, չար- չարեալ, ջաղխեալ, մանրեալ, խորտակեալ, կտրեալ. Ահաւասիկ իբրև զկառս իմն լծեալ ՚իչորից երկվարաց զաշխարհս տեսանեմք. ՚իջերմութենէ, ՚իցրտութենէ, ՚իցամաքութենէ և ՚իխոնաւութենէ:

Գ. Եթէ այդպիսի միատեսակ անդամները նախադասու- թեան մէջ երկուսից աւելի չեն և միացած են ա, կամ շաղ- կապներով՝ ստորակէտներով չեն բաժանուիլ. իսկ եթէ շատ են, թէպէտ այդ շաղկապներով միացած էլ լինին՝ կը բաժանուին ստորակէտներով:

— Մեք և նոքա ժառանգեսցուք գքաղաքամայրն բարեաց. Տիկ- նայք փափկասունք Հայոց աշխարհին, որ զրգեալք և գգուեալք

էին յերաքանչիւր բաստեռունս և ՚իգահաւորակս, հանապազ բոկ և հետի երթացին ՚իտունս աղօթից: Ձեք իսկ առ քեզ ցասումն սրտի և կամ բորբոքումն բարկութեան. եթէ եղբայր ոք կամ քոյր իցեն մերկք. Ձամենայն չափով, և թուով, և կռով կարգեցեր. Հաստատեալ եմ եթէ ոչ մահ, և ոչ կեանք, և ոչ հրեշտակք, և ոչ իշխանութիւնք, և ոչ որ կանս, և ոչ հանդերձեալքն, և ոչ զօրութիւն, և ոչ բարձրութիւն, և ոչ խորութիւն, և ոչ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ ՚իսիրոյ անտի Աստուծոյ. Այլ կամ զհուր, կամ զհողմ, կամ զօդ արագ, կամ զաստեղաց շրջանս, կամ զջրոց բռնութիւնս, կամ զլուսաւորս երկնաւորս՝ զարբանեակս աշխարհի՝ աստուածս համարեցան:

Գ. Կոչական բառերն իրանց կցորդ բառերով պէտք է տրոհուին ստորակէտներով:

— Տէր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն. Աստուածորդեղ Պարսեց, ահա հայր քո և աստուած, ընդէր զանգիտես. Պսակեմ զքեզ, Մեհրուփան, քանզի ՚ի խնդիւր էիւ թագաւորել Հայոց. Մի մեզ, Տէր, մի մեզ, այլ անուան քո տուր փառս. Այս ինչ յայտնի լիցի քեզ, արքայ:

Ե. Խօսքի մէջ միջանկեալ բառերը նոյնպէս բաժանուումն ստորակէտներով:

— Ակն, ասէ, ընդ ահան և ատամն ընդ ատաման. Երկինք, ասեն, որչափ ՚ի վեր են՝ դոյնչափ ՚ի խոնարհ են.

**286.** Միջակէտը բաժանումէ՝ Ա. Այնպիսի նախադասութիւններ, որոնք թէպէտև համաձայնօրէն անկախ են միմեանցից, բայց խօսումնն նոյն նիւթի վերայ:

— Բագում ձմերաց հալեցան սառնամանիք. եհաս գարուն և եկին նորեկ ծիծեռունք. տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ, և նոքա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց:— Երկիւր թերահաւատութեան է նշանակ. զթերահաւատութիւն մեք ՚ի մէնջ վաղ մերժեցաք:

Բ. Դրուումէ այնտեղ, ուր պիտի սկսի ուրիշի ասած խօսքը:

— Իբրև լուսւ գայս թագաւորն՝ ՚իխոր խոցեալ վեր իվերոյ ծիծաղեցաւ և ասէ. Ամենայն այդ խաբէութիւն է: Ետ պատասխանի զինուորն Քրիստոսի և ասէ. Եթէ հաւատարեիմ են քեզ մարմնաւոր չարչարանք նորա, հաւատարմագոյն ևս լիցի քեզ երկրորդահաւոր գալուստն նորա:

Գ. Դարձեալ այնտեղ, ուր հետևեալ նախադասութիւնը նախնթացին իբրև բացատրութիւն է ծառայում կամ իբրև պատասխան:

— Եւ որ մեծն քան զամենայն ասացից, ոչ միայն մարդիկ յերկրի, այլ և հրեշտակք յերկինս գերեսս իւրեանց դարձուցին ՚իմէնջ. Ձիւն իցէ առ ի բազմացն պատիւ. և ոչինչ: Եւ այս անուանք են նախարարացն. ՚Ի տոհմէն Սիւնեաց Վասակ անուն, ՚իտոհմէն Արծրունեաց Ներշապուհ անուն, և այլն:

Գ. Միջակէտ է դրուում նաև համառօտագրութեան մէջ կրճատած բառերից յետոյ:

— Ս. Գրեգոր Լուսաւորէչ, Աշոտ Ա.,—Լևոն Գ.,—Սրբիդ. Բարբառոսա, —Քեր. Հ. Ար. Բագրատունւոյ, —Ծնն. Գիւրք, —Թուղթ Պօղոսի առ Կոր. Ա., —Ներ. Շն. Ընդհանրականն:

**287.** Վ ե բ ջ ա կ է տ ը դրուումէ ամբողջ ու լրացած խօսքի վերջը:

— Նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուգանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փեսայի և հարսին: Հինգն ՚ի նոցանէ յիմարք էին և հինգն իմաստունք: Յիմարքն առին զլապտերսն, և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին. իսկ իմաստունքն առին ձէթ ամանովք ընդ լապտերս իւրեանց: Եւ ՚իյամել փեսային՝ ներհեցին ամենեքեան և ՚ի թուն մտին: Եւ ՚իմէջ գեղերի եղև բարբառ. Ահա փեսայ գայ. արևք ընդ առաջ նորա: Յայնժամ յարեան ամենայն կուսանքն և կազմեցին զլապտերս իւրեանց:

**288.** Չ ա կ ե տ ը դրուումէ գրութեան մէջ բերուած ուրիշի խօսքի սկզբում և վերջում, (որ երբեմն զանց է առնուում, շատանալով միայն միջակէտով (286. Բ.):

— Ձիւն, առնիցէք զպատուիրեալսն ՚ի Տեառնէ. «Որ ուրացի զիս առաջի մարդկան՝ յուրաստ եղէց և ես առաջի Հօր իմոյ որ յերկինս է, և հրեշտակաց սրբոց: Իստանացաւ թագաւորն յանձն իւր, և ասէ անսուտ երգմամբ. «Եթէ արեւսցի անօրէնն այն ՚իմեծ պատերազմէն, մեծաւ անարգանօք տամ ըմպել նմա զբաժակն դառնութեան մահու»: Տեսեալ զնա Ջրուանայ, ոչ գիտաց եթէ ո ոք իցէ. և հարցանէք, եթէ «Ո՞վ ես դու»: Եւ նա ասէ. «Ես եմ որդին քո»: Ասէ ցնա Ջրուան. «Իմ որդին անուշահոտ և լուսաւոր է, և դու խաւարին և ժանգահոտ ես»:

**289.** Փ ա կ ա գ ի ծ ը դրուումէ միջանկեալ խօսքի կամ բառի երկու կողմում, այնպէս որ եթէ փակագծի միջի խօսքը կամ բառը դուրս հանես խօսքից՝ վերջինս չի կորցնիլ իմաստի լրութիւնը:

— Եւ եղև ընդ հանել ոգւոցն (քանզի մեռաւ) կոչեաց զանուն նորա որդի վշտաց իմոց: Թէպէտ և 'ի գործ արուեստին ըզբաղեալ էին (և գետէք իսկ թէ գինորդ քաղցը և պատիւ ձկնորսութիւնն էր), սակայն ոչինչ դանդաղեցան: Յարեաւ 'ի վերայ նորա Վասակ (ոչ Սելենին):

Շատ անգամ միջանկեալ խօսքի երկու կողմը փակագծի փոխանակ դրուումեն ստորակէտներ կամ անջատման գծեր: Երբեմն էլ փակագծի մէջ պատահումէ մի ուրիշ փակագիծ [ ], որ կոչուումէ *Կ ր կ ի ն*—*փ ա կ ա գ ի ծ*:

**290.** Կ ա խ մ ա ն - կ է տ ե ը դրուումեն որ և է պատճառով կիսատ թողնուած խօսքի վերջը:

— Աւսոյ զբիւնացն... աւսոյ թշուառական պատմութեանս... Որպէս հայր ոք յորժամ զորդի իւր խրատիցէ . . . չծուլալ յուսմանէն . . . նոյնպէս և զԱստուծոյ պարտ է իմանալ:

**291.** Մ ի ու թ ե ա ն - գ ի ծ է կոչուում այն փոքրիկ գիծն, որ դրուումէ բաղադրութեամբ միացած բառերի մէջ, ցոյց տալով թէ նոքա չպէտք է անջատուին:— Միւր-Ներսէս, Հայ-Հոռոմ, Ատր-Որմիզդ, Նախադրութեամբ-Խնդիր, Ֆրանս-Պրուսական:

**292.** Ա ն ջ ա տ մ ա ն—գ ի ծ ը, նախընթացին հակառակ, բաժանումէ՝ Ա. Մի նախադասութիւն միւսից, երբ վերջինն առաջինն լինումէ իբրև բացատրութիւն կամ պատասխան:

— Կարո՞ղ էր զնա մերժել բարին յիւրոց 'իբարեոք արարածոցն, եթէ չէր կարող: Եթէ ասիցեն՝ եթէ կարող էր, լուրցեն.— եթէ կարող էր մերժել գարն և ոչ մերժեաց, ինքն է պատճառ վնասուն: Այլ ասեն փառաց առնէր գաշտն:— Հարցցուք.— փառքն յումեքէ՞ մջողեալ էին նմա: Ո՞վ է Պողոսն և ո՞վ Ապողոս:— Մառայք Տեառն:

Բ. Երկու թուերի մէջ անջատման—գիծը նշանակումէ յինչ:— 8—10, 1880—1884 թ., Ե.—Թ. դար.

**293.** Արդի հեղինակներից ոմանք եւրոպական կէտադրութեան հետեւելով խօսքի մէջ գործ են ածում և Տ ա ր ա կ ու ս ա կ ա ն, Ջ ա ը մ ա ց ա կ ա ն և Ծ ա ղ ը ա կ ա ն նշաններ, որոնք կամ դրուումեն նախադասութեան վերջը և կամ նոյն բառերի իմաստը պարունակող բառերից յետոյ: Հետեւալներն են. *փ, ց, չ, չ, ւ*, կամ թէ՛ *?, !, ?!*:

### Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Մ

#### ԲԱՐԴՈՒԹԵԱՆՅ ԵՒ ԱԾԱՆՅՄԱՆՅ ՄԱՍԻՆ

**294.** Բառերի բարդութեանց և ածանցման մասին համառօտապէս յիշուեցաւ Քերականութեանս Ա. մասի մէջ (§ 5.): Այստեղ ուսումնասիրողի փափագը յագեցնելու համար կը խօսինք առաւել մանրամասն բարդութեանց և ածանցմանց քերականական օրէնքների վրայօք:

#### Ա.

**295.** Բ ա ը դ ու թ իւ ն ը կարող է լինիլ կամ բարդուող բառերի որ և է կերպ փոփոխուելով և կամ առանց փոփոխութեան. այլև՝ յօդակապ գրի միջնորդութեամբ կամ առանց յօդակապի:

**296.** Բառերի փոփոխութիւնը սովորաբար լինումէ քերականական յայտնի օրէնքներին համաձայն, այսինքն՝ *կ ո ը ու ս մ ա մ բ* և *փ ո փ ո խ մ ա մ բ*: Յոգնականի օ յանգը նոյնպէս զեղչուումէ սովորաբար կամ դառնումէ \* :— Սիրայորդոր (սէր), գրահաշիւ (գիր), ջրամոյն (ջուր), մեծափառ (փառ\*), կենագրաւ (կեան\*), մտայոյզ (միտ\*), մեղսակից, կենսատու:

297. Յօդակապ գրերն են ա, է, է: Ա յօդակապը միացնումէ այնպիսի բարդուող բառեր, որոնցից վերջինն սկսւումէ բաղաձայն տառով:— Բան-ա-սէր, գր-ա-դէտ, մեծ-ա-պարգև, պտղ-ա-բեր, է-ա-կից, լի-ա-ձեռն, արփի-ա-հրաշ:

Երբ այսպէս բարդուած բառերը վերստին բարդուին կամ անանցուին՝ յաճախ ա յօդակապը կը զեղչուի քաղցրահնչիւն լինելու համար:— Աստուածապաշտ—աստուածապաշտութիւն, անձնանուէր—անձնուէրութիւն արծաթասէր—արծաթսիրութիւն, ճարտարամիտ—ճարտարմտութիւն:

298. Երբ առաջին բառը լինի է յանդով բաղմավանկ՝ ա յօդակապը կը փոխուի է, երբեմն և է, (ի—է—է կամ է):— Հոգէսէր, գարէջուր, բարէկամ, աղաւնէվաճառ, ոսկէսանձ կամ ոսկէսանձ, հոգէկիր կամ հոգէկիր:— Երբեմն էլ ա չի փոխուում.— Կեռքնակ, ծիրանագգեաց, սքանչելահրաշ, բարիասաց, հոգիսիրութ:

299. Չատ անգամ բառերը բարդուածն իրանք իրանցով:— Ինչպէս, գունդագունդ, մեծամեծ, զանազան. և կամ մասնաւոր տառափոխութեամբ՝ խառնամառն, խաժամուտ, աղջամուղջ, բարձրաբերձ, աղխամաղխ, ժանտաժուտ, խուժագուժ:

300. Յօդակապների փոխանակ բարդութեանց մէջ երգեմն դրուածն ՚ի, ղ, ա, ը, յ նախդիրները, կամ թէ ա, և շաղկապները:— Կորիզուխ, կաղիկաղ, գլխիվայր, գոյնչգոյն, թելլթել, խիտախիտ, մօտամօտ, գիրկլխառն, խոչնոտ, օրոփօրեայ, տանտէր, ութտան, այրածի, առտուր, երթեեկ, ելէջ:

301. Երբ բարդուող բառերից վերջինն սկսուի ձայնաւոր տառով՝ յօդակապ չի դրուիլ:— Ծերաւուրց, հինօրեայ, բաղմաշխատ, ծովկար, հրաջեայ, լիառատ, փղոսկր, գուզընթաց:— Կոյնն է շատ անգամ և է, յ, տառերով սկսուողների համար, որպիսի դէպքում այդ տառերը յաճախ զեղչուածն:— Ջրհեղեղ, վերհամբարձ, փողար (փողհար), ծայրատ (ծայրհատ), կառափնատ (կառափնհատ), հացաւետ (հացյաւետ):

Յաճախ առանց յօդակապի բարդուածն և այնպիսի բառեր, որոնց մէջ ըստ կանոնի պէտք է լինէր նա:— Սուտ-մուտ, փոփոխ (փոխփոխ), վազվազել, բեկբեկ, շօշոջել, բաբախ, (բաղխարաղխ), շաղփաղփ, խլխլել:

Բ.

302. Ա ծ ա ն ց ե ա լ կոչուածն այնպիսի բառերն, որոնք սկզբում կամ վերջում մասնի ունին:

303. Մասնիկն ըստ ինքեան աննշանակ ձայն է, բայց յաւելանալով բառի վերայ՝ այս կամ այն կերպ փոփոխումէ նորանշանակութիւնը: (Հաղիւ ուրեք պատահումէ, որ մասնիկը չէ մտցնում ոչինչ փոփոխութիւն բառի իմաստի մէջ:

304. Ածանցմանց մէջ ևս ճշդիւ պահուածն կորուսման և փոփոխման կանոնները: Նմանապէս՝ այստեղ էլ բառն ու մասնիկը միանումն կամ յօդակապով կամ առանց յօդակապի:

305. Ածանցման յօդակապն է ա: Սա դրուումէ բառի և յետոյ մասնիկի մէջ տեղը, թէ որ մասնիկը բաղաձայնով է սկսուում կամ կէս ձայնաւորով.— լալ-ա-գին, է-ա-կան, հիւր-ա-նոց, մեծ-ա-ւոր, հայ-ա-ցի, աչ-ա-ցու:— (Աննշան բացառութեամբ՝ ա-ի փոխանակ կը պատահի է կամ է յօդակապ):

Եթէ մասնիկից առաջ բառը վերջանայ ՚ի և բաղմավանկ լինի, ա հետը միանալով կ'ամփոփուի կը դառնայ է (ի—է—է), երբեմն էլ ՚ի կը զեղչուի:— Հոգէկան, հոգէւոր, տարէկան, եկեղեցական, առաքինական:

Երբեմն առանց մասնիկի անանցումն այնպիսի բառեր, որոնց մէջ մասնիկ հարկաւոր էր ըստ կանոնի.— Գուժկան, ուժգին, բոլորչի, աղօթիկեր:

306. Նախադասութիւնները բոլորն էլ ժ ի տ ա կ ա ն, բ ա ց ա ս ա կ ա ն են.— ա, ք, քժ կամ քժ, չ և ա: Այս մասնիկները միանումն բառերի հետ առանց յօդակապի, բացի ա մասնիկից, որ բաղաձայնով սկսուող բառերի հետ ա յօդակապով կը միանայ:— Անմիտ, անշնորհ, անարուեստ, անօրէն. տգէտ,

տհաս, տկար, տմարդի. դժգուհ, դժբարդ, տժգոյն. չաստուած, չգոյութիւն, չերէց, չէ (դոյական), չիմաստուն. ապուշ, ապօրինի, ապաշնորհ, ապաժաման, ապերախտ, ապերասան:

**307.** Յ ե տ ա դ ա ս մասնիկների թիւը շատ շատ է. նոցանից մի քանիսը տեսանք անուանց մէջ (իբր յոգնականացուցիչ մասնիկներ— անք, ինք, ունք, տի, ստան, այք, ոյք, որայք). այլ քանիսն էլ տեսանք բայերի մէջ (իբրև ածանց— ան, ն, չ, նչ, են, ոյց): Մնացածներից առաւել կարևորներն ու շատ գործածականները հետևեալներն են՝ այբուբենական կարգով.

- 1. Ած. Արարած, յօրինած, ասայած, այրեցած, հատուած, զանգուած, խնդրուած (\*):
- 2. Ակ. Գիտակ, խնդրակ, խօսակ (— սունակ), խառնակ, վերելակ, խոստրակ (— բուն), էակ, նաւակ, օրինակ, գրչակ, խշտեակ (— տիւակ), բաւարակ, հոգեակ, պատանեակ, աղանեակ:
- 3. Այ. Կամայ, ախմայ, անուղղայ, միջերկրայ, հեգեայ, եպիկուրայ:
- 4. Այն. Համայն, ամենայն, լեռունդեռնայն, վաղորդայն, նոյնժամայն:
- 5. Ան. Խթան, նշան, շրջան, իշխան, պարան, կոխան, անպիտան, անապական, կերպարան, վիպասան:
- 6. Անք. Զարմանք, յանցանք, աղաչանք, մաղթանք, դաւանք:
- 7. Ար. Մթար, տիպար, մոլար, զարդար, արդար, յարդար:
- 8. Սց, եաց. Երգասաց, արագընթաց, երկնատեղաց, տերատեաց, լուսազգեաց:
- 9. Գին. Ուժգին, ցաւագին, լալագին, գուարթագին, սրտագին:
- 10. Եայ. Հայկազնեայ, պիւթագորեայ, քաղդեայ, մամիկոնեայ, սղնձեայ, կաւեայ, միօրեայ, այժմեայ, պաշտօնեայ, գործուեայ, ստնդեայ, անձնեայ, աչեայ, դժնեայ:
- 11. Եան. Արամեան, Մամիկոնեան, արևելեան, այժմեան, սերկեան, նարդեան, գունեան, պատեան, քառակերպեան, ներբողեան, հնգեան:

(\*) Երբեմն մասնիկը առաջ լինում է ուրիշ մասնիկ ևս. — դիպուած, սովորութիւն (ոյթիւն):

- 12. Եդ. Հանճարեղ, ուժեղ, թաթեղ, դօրեղ, ալանջեղ:
- 13. Եք. Նրբեք, ուրեք, ուստեք, երեք, չորեկերպեան:
- 14. Էն. Նկարէն, երեքտակէն, փոխաէն, մոմէէն, հրէէն, մարդկէէն, ինձէն, քեզէն:
- 15. Էք. Տնօրհնէք, ջրօրհնէք, հիմնարկէք, եօթնօրէք, երբէք:
- 16. Ի. Քեռի, Արշակունի, Պահլավունի, արծաթի, խնձորի, հայրենի, առիւծենի, նշենի, ծերունի, գողունի, գործի, աղօրի, ունելի, բանալի, վտարանի, օտարանի, ճարակի, չորքոտանի, վաղէ՛նի, կորովի, սնունի, աղտուի, պետունի, կենդանի, այրի, թերի, ձրի:
- 17. Իկ. Հնդկի, սարսիկ, խուժիկ, գերմանիկ, բնիկ, գուհիկ, ռամիկ, մարտիկ, մարդիկ, թափանցիկ, շատաշրջիկ, երգչիկ, գեղչիկ, ագուցիկ, ուռուցիկ, սաստիկ, աչիկ, հայրիկ, մանիկ, գառնիկ, թոռնիկ, ոսկէլիկ, այժմիկ, անուշիկ, քաղցրիկ, հեգիկ:
- 18. Ին. Առաջին, առաւօտին, աջին, վերին, ստորին, երկնային, խաւարային, մարդկային, քոյին, երեկոյին, բաժին, լուսին, մթին, խորին, չնչին, երկուսին, երէտին, ազգուին, երամուլին, ինքնին, անհնարին:
- 19. Իչ. Նկարչչ, գրչչ, բրչչ, քարոզչչ, ուսուցչչ, բնակչչ, կալիւրչչ, քաւիչչ:
- 20. Իւն. Գոչիւն, լալիւն, հնչիւն, ղօղանջիւն, մեծալիւն, նմանալիւն:
- 21. Իք. Կարիք, չարիք, կեղծիք, աւետիք, լալիք:
- 22. Կան. Հայկական, հռովմէական, նեստորական, լուտերական, եզական, հոգեկան, տէրանական, գործական, դուժկան, առաջնորդական, փախստական, վարձկան, հաւանական:
- 23. Կի. Կողմնակի, յաճախակի, ուղղակի, արշաւակի, յանկարծակի:
- 24. Նի. Յայտնի, գաղտնի, մատանի, գեղանի, հովանի, լեզուանի:
- 25. Նոց. Կառանոց, հիւրանոց, զլխանոց, մատնոց, աղքատանոց, միայնանոց:
- 26. Նօր. Աստանօր, անդանօր, ուրանօր:
- 27. Ող. Սերող, ազգող, այրեցող, ընթացող, կերող, արբեցող, տիրող, յաջող:

- 28. Ոյ. Աջոյ, ձախոյ, յետոյ, ազդոյ, հաճոյ, արգոյ, մեծւոյ, երեկոյ, կարճոյ, կոփածոյ, հաւաքածոյ, կոծոյ, յագածոյ, ձուլածոյ:
- 29. Ոյթ. Երեւոյթ, հասոյթ, սովորոյթ, աւագոյթ, զայրոյթ, հացկերոյթ, հրերոյթ, մեռելոյթ:
- 30. Ոյն. Ողջոյն, իսկոյն, կենդանւոյն, ձեզոյն, քեզոյն, հանգոյն, ուրոյն:
- 31. Ոյց. Վարձահատոյց, օրէնսուսոյց, մեռելաչարոյց, այտոյց, ոււոյց, սառոյց:
- 32. Ոտ. Բորոտ, ծակոտ, կասկածոտ, խանձոտ, լքոտ, զայրացոտ (—ցուկոտ), անձկոտ, ծիծաղոտ, աւագոտ, զայրափոտ:
- 33. Որ. Բեկոր, հատոր, կոտոր, մոլոր, գլոր (գելոր), սինկոր (լեքոր):
- 34. Որդ. Այգորդ, կցորդ, ուղղորդ, մնացորդ, երրորդ, չորրորդ, որսորդ, ժառանգորդ, ճանապարհորդ, ձախորդ, փոխորդ, աւելորդ:
- 35. Ոց. Սղոց, խարտոց, հալոց, վարոց, պրկոց, քրոց, դարոց, բազմոց, թիկնոց, միջոց, ծաղկոց, ջարդոց, տալոց, գալոց, առնելոց, սիրելոց:
- 36. Ու. Աջու, ձախու, այժմու, հատու, ազդու, այցելու, հոգաբարձու, բանասրկու, արիւնարբու, վերարկու, հասու, քաղցու, մեղու:
- 37. Ուկ. Գեղջուկ, նեցուկ, յեցուկ, պարծուկ, այլուկ, ողորմուկ, մղձուկ, շնորհուկ, նախանձուկ, զայրացուկ:
- 38. Ումն. Ուսումն, կոչումն, խոստումն, ներումն, հեղումն:
- 39. Ունդ. Սերունդ, ծնունդ, սնունդ:
- 40. Ունք. Իրաւունք, կոչունք, խրախունք:
- 41. Ուչ. Տեսուչ, վայելուչ, ընկալուչ, սրտառուչ, թաթաւուչ:
- 42. Ուտ. Պարզուտ, կրթուտ, հոսուտ, շիջուտ, եղեգնուտ, թաւուտ, վիմուտ, տղմուտ, ծարաւուտ:
- 43. Ուրդ. Յագորդ, աճուրդ, խառնուրդ, ժողովուրդ, կացուրդ:
- 44. Ուց. Նեղուց, սպիտակուց, ալուց, այրուց, այտուց, խայտուց:
- 45. Պան. Պարտիզպան, պաշտպան, սուսպան, բազպան, դռնապան:
- 46. Ստ. Եստ, իստ, ուստ.—Ձգաստ, ուրաստ, տապաստ, պահեստ, գովեստ, հրաժեշտ (փոխանակ հրաժեշտ), հանգիստ, փախուստ, թաքուստ:

- 47. Ստան. Հայաստան, դատաստան, ծառաստան, հեռաստան, անդաստան:
- 48. Բան. Քաւարան, վարժարան, ճեմարան, հարսնարան, մեծարան, աւետարան, տանջարան:
- 49. Բէն. Հայերէն, պարսկերէն, հրէարէն, դաղմատերէն, ֆրանսերէն:
- 50. Յի. Հայացի, փարիսեցի, մանիքեցի, քաղաքացի, առնացի, ձեռամբացի, նշանացի, բերանացի:
- 51. Յու. Մահացու, պիտոնացու, կենդանացու, տիրացու, քահանայացու:
- 52. Իոր. Երկնաւոր, փառաւոր, հոգեւոր, աղօթաւոր, ուղեւոր, բանաւոր, գործաւոր, կամաւոր, կանգնաւոր, ունեւոր:
- 53. Օն. Ձգօն, գողօն, պաշտօն, կրօն, կտրօն, գործօն, ցրօնք, լալօնք:
- 54. Օտ. Համառօտ, կարճառօտ, ծղօտ, կարօտ, արօտ:

**308.** Բարդութեանց և ածանցմանց վերաբերմամբ, իբրև կարևոր գիտելիք, այսչափս առ տեղեւու բաւական ենք համարում նորավարժ պատանեաց համար. մանաւանդ որ դժուարին չէ մի անգամ իմանալով բառերի բարդութեանց և ածանցմանց հիմնական օրէնքները՝ գտնել ու գատել մասնիկներն արմատ բառերից: Սորանից աւելին գիտել ցանկացողը կարող է իւր փափագը լցուցանել Հ. Ա. Բագրատունու «Իպէտս գարգացելոց» Քերականութեան մէջ (660—693):

Վ Ե Ր Զ.





ԳԼՈՒԽ Ե.	Նախագրութիւն	70.
ԳԼՈՒԽ Զ.	Մակրայ	77.
ԳԼՈՒԽ Է.	Հաղկապ	79.
ԳԼՈՒԽ Ը.	Չափնարկութիւն	80.
	<b>ՀԱՄԱՆՉԱՅԻՆՈՒԹԻՒՆ.</b>	
	<b>ՆԱԽԱՇԱԽԻՂ.</b> —կազմութիւն բանի	83.
ԳԼՈՒԽ Բ.	Ենթակայ և Ստորագեալ	87.
ԳԼՈՒԽ Գ.	Ստորագիյի	90.
ԳԼՈՒԽ Դ.	Խնդիր. Ա. Բաղերի խնդիրները	92.
	Բ. Անուանց խնդիրները	95.
ԳԼՈՒԽ Կ.	Յատկացուցիչ և լատկացեալ	96.
ԳԼՈՒԽ Ե.	Բացուցադրիչ և բացաչադրեալ	97.
ԳԼՈՒԽ Զ.	Մակդիր	100.
ԳԼՈՒԽ Է.	Կոչական անուն	103.
ԳԼՈՒԽ Ը.	Ո՛ր յարարերական	103.
ԳԼՈՒԽ Թ.	Ս, Ի, Ն յօդերը	106.
	<b>ՀԱՐԱՆՈՒԹԻՒՆ.</b>	
	<b>ՆԱԽԱՇԱԽԻՂ</b>	111.
ԳԼՈՒԽ Ա.	Պարզ շարագրութիւն	112.
ԳԼՈՒԽ Բ.	Չաւար կարգ	113.
	Ա. Չըջումն	113.
	Բ. Չեղջումն	116.
	Գ. Աւելացրութիւն	118.
	Դ. Բակառութիւն	121.
	<b>ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ.</b>	
	<b>ՆԱԽԱՇԱԽԻՂ</b>	123.
ԳԼՈՒԽ Ա.	Տառերի ուղղագրութիւն	123.
ԳԼՈՒԽ Բ.	Առողանութիւն	127.
ԳԼՈՒԽ Գ.	Տրոհութիւն	130.
	<b>ՅԱԻԵԼՈՒՄԸ.</b>	
	Բարդութեանց և ամանցմանց մասին	137.
	Ա. Բարդութիւն	137.
	Բ. Ամանցումն	139.

Հարկաւոր է նախ և առաջ ուղղել տպագրութեան մէջ սպրդած հետևեալ նշանաւոր վրիպակները. մնացեալ սակաւաթիւ սխալներն աննշան են և ըստ ինքեան կը հասկացուին:

**ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԻՊԱԿՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ**

Էջ.	Տառ.	Սխալ.	Ուղղ.
7.	9.	§ 290—304	§ 302—307.
10.	24.	§ 256	§ 259
11.	7.	§ 265	§ 268
32.	5.	և — ան զև	և — ան զև
38.	1.	զ2ձեզ	զ2եզ
»	12.	Տր. Այսց	Այսմ.
»	15.	Բայ. Ասմանէ	Այսմանէ
40.	13.	Հոլուում է	Հոլովուումէ
»	24.	լայնէ	լայմէ
52.	3.	Բ. լծ.	Գ. լծ.
54.	14.	— յշե՛՛	— յշե՛՛
»	18.	— իշե՛՛	— իշե՛՛
»	20.	իշե՛՛	իշե՛՛
55.	24.	իշե՛՛	իշե՛՛
»	28.	(Ոստի-) յե՛՛	յե՛՛
»	29.	(Ոստի-) յե՛՛	յե՛՛
56.	10.	Ոստացեալ	Ոստուցեալ
60.	13.	Կերց. — ցուք	Կերիցուք
64.	16.	անզեմ	անդէմ
65.	1.	կազմումէ	կազմուումէ
»	33.	(79).	(80).
68.	12.	լասնիչ	լայսնիչ
69.	5.	երկուք	Երկուք

Էջ.	Տ-շ.	Սկիզբ.	Ուշիշ.
70.	24.	առնին	առնեն
71.	10.	գրվում	գրում
72.	13.	»	»
»	27.	վերայից	վերայից
»	30.	զինուորքն	զինուորքն
76.	8.	միտք, քս	միտք քս
»	20.	ընդ կողաց	ընդ կողաց
78.	13.	յայնապէս	յայնապէս.
»	16.	Թողր օն անրբ	Թողր. օն անրբ
80.	12.	իրբև զկաւս	իրբև զկաւս
81.	9.	Աշխի՛ - ծառայ բարի,	Աշխի՛ - , ծառայ բարի
90.	16.	ի բազում ամաց	ի բազում ամաց
97.	21.	ածական:	ածական է:
99.	15.	յԱնիւս	յԱնիւս
103.	23.	ածականաբար	ածականաբար
110.	2.	ածն ՚ի չգոյէ	զի ածն ՚ի չգոյէ
119.	5.	ի փորձութեան	ի փորձութեան
121.	28.	անհերիքս,	անհերիքս,
130.	—	— 230 —	— 130 —
131.	—	— 231 —	— 131 —

*Մատենադարանի Գրքանոցի*  
*Կարգապետ Առնոսի*

132.	—	— 232 —	— 132 —
133.	—	— 233 —	— 133 —
134.	—	— 234 —	— 134 —
135.	—	— 235 —	— 135 —
136.	—	— 236 —	— 136 —
137.	—	— 237 —	— 137 —
138.	—	— 238 —	— 138 —
139.	—	— 239 —	— 139 —
140.	—	— 240 —	— 140 —
141.	—	— 241 —	— 141 —
142.	—	— 242 —	— 142 —
143.	—	— 243 —	— 143 —
144.	—	— 244 —	— 144 —
145.	—	— 245 —	— 145 —
146.	—	— 246 —	— 146 —
147.	—	— 247 —	— 147 —
148.	—	— 248 —	— 148 —
149.	—	— 249 —	— 149 —
150.	—	— 250 —	— 150 —

2p

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45 46 47 48 49 50 51 52 53 54 55 56 57 58 59 60 61 62 63 64 65 66 67 68 69 70 71 72 73 74 75 76 77 78 79 80 81 82 83 84 85 86 87 88 89 90 91 92 93 94 95 96 97 98 99 100

2013 2833

« Ազգային գրադարան



NL0061453

